№ 182 ՈՒՐԲԱԹ, 20 ՕԳՈՍՏՈՍԻ

1910

ԵՐԵՍՈՒՆՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՈՒՐԲԱԹ, 20 ՕԳՈՍՏՈՍԻ № 182

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի.
Առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ» Сергіевская ул., № 5.
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Խմբագրատան տելեֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).
Յայտարարութիւն ընդունվում է ամեն՝ լեզւով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20 կոպէկ.
Խմբագրատան տելեֆօն № 253.

ՄՇԱԿ

Հասցէն. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ».
TIFLIS, Rédaction «MSCHAK».

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ ՏԱՐՎԱՑ ՎԵՐՋԸ
4 ՐՈՒԲԼԻ

12 ամսվ.՝ 10 ր., 6 և 7 ամսվ. 6 ր., ամսակ. 1 ր. Ամերիկա՝ տարեկան 6 դոլլար, Եւրոպա՝ 32 ֆր., Պարսկաստան՝ 10 ր., Թիւրքիա՝ 120 ղրուշ:

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել հին հասցէն, նոյնպէս և 40 կոպ. (կարելի է և նամակադրոշմով):

Յայտարարութիւնների համար վճարում են. I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին 20 կոպ., վերջին երեսի վրա՝ 10 կոպ.: Կովկասից դուրս յայտարարութիւնները ընդունվում են բացառապէս Торг. Домъ „Л. и Э. Метцль и К°" ֆիրմայի միջոցով Մոսկվայում, Պետերբուրգում և Վարշավայում:

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՐՏԷԶ
ՖԼՕՐԱ ՎԱՐԴԱՆԵԱՆԻ
Սօլօլակ, Լերմոնտովսկայա փողոց, № 21.

Ընդունվում են երեխաներ 3 տարեկան հասակից: Բացված է III բաժանմունք (այբբենարան): Երեխաների ընդունելութիւնը օգոստոսի 28 ից, իսկ պարապմունքների սկիզբը սեպտեմբերի 3-ից: Ընդունվում են նմանապէս գիշերօթիկներ:
տ. 958. 6—1

ԸՆՏԻՐ ՀԱՏՈՒԱԾՆԵՐ
(Է Ժ Ա Ն Ա Ց Ր Ա Ծ)
Արձակ—370 եր. Բանաստեղծութիւն—419 եր.: Գինը՝ 80 կ.: Գումարով գնողին՝ 60 կոպէկ:
Դիմել՝ 1) Москва, священнику Назарьянцъ, 2) Тифлисъ, Центральная книжная торговля, 3) Книжный магазинъ „Гиръ" և 4) Баку, книжный магазинъ „Сотрудникъ".
Մոսկվա դիմողը ճանապարհածախս չէ տալիս:
(5,13,20) տ. 901. 3—3

ԸՆԹԱՑՔ ՏՈՒԷՔ

«Մշակի» երէկվայ և այսօրվայ համարներում զետեղված է Ստ. Մալխասեանցի յօդուածը ուսուցչական թոշակարգի մասին:

Խնդրի պարզաբանութիւնը, որ մասամբ արված է մի երկու անձերի կողմից նախորդ յօդուածներով, այժմ աւելի ևս խորանում ու ընդարձակվում է ներկայ յօդուածով, որի մէջ շօշափված են խնդրի էական կէտերը և փորձ է արված ուրուագծելու այն նախնական հիմունքները, որոնց վրա պէտք է հիւսվի թոշակարգի կանոնադրութեան ծրագիրը:

Այժմ պէտք է աւելի ևս առաջ գնալ, և արդէն իրագործութեան շաւղի վրա կանգնել:

Եւ որովհետև թոշակարգը գործելու է բոլոր հայ դպրոցների ուսուցչական խմբերի համար, որոնք պէտք է կապված լինեն ընդհանուր կազմակերպութեամբ, ուստի ցանկալի է, որ իրաւական մարմին գլուխ անցնէր խնդրի մշակութեան գործին և ձեռնարկէր նրա գործնական իրագործութեան:

Եթէ Վեհափառ կաթողիկոսը կարգադրէր կազմակերպել մի յատուկ յանձնաժողով այդ նպատակով Թիֆլիսում, հնարաւոր կը լինէր առաջիկայ ամիսներում բաւականաչափ մշակել խնդիրը և հասցնել նրան իրագործութեան նախօրեակին:

Նպատակայարմար է կազմել յանձնաժողովը Թիֆլիսում այն պատճառով, որ Թիֆլիսում աւելի շատ են անձեր՝ տեղեակ թէ թոշակարգեր հիմնելու և թէ դպրոցական գործերին:

Այդ յանձնաժողովի կազմի մէջ կարող են մտնել հասարակական հաստատութիւնների ներկայացուցիչները և մասնաւոր ձեռնհաս անձեր:

Յանձնաժողովի մի որոշ աստիճան պաշտօնական ձև ստանալը այն յարմարութիւնն ունի, որ նա կարող է դիմումներ անել այս ու այն հաստատութեան և խնդրել տեղեկութիւններ ու ցուցումներ, որոնք պիտանի կը դառնեն գործի համար: Օրինակ, անհրաժեշտ է տեղեկութիւն ունենալ ուսուցիչների քանակի մասին ներկայումս և գաղափար կազմել այդ քանակի աստիճանաբար աւելացման մասին ապագայում: Նոյնպէս անհրաժեշտ են թոշակարգերի ծրագիրներ, որոնք արդէն մշակվել են զանազան հաստատութիւնների մէջ, օրինակ Ներսիսեան դպրոցի, Թիֆլիսի քաղաքային ինքնավարութեան, Թիֆլիսի կրեդիտային ընկերութեան, երկաթուղու և այլ վարչութիւնների մէջ:

Ինչ վերաբերում է հասարակական աջակցութեան, նա կարող է այժմեանից իսկ սկսել արտայայտվել յատուկ ջանքերով՝ կազմելու պահեստի դրամ, որը աւելանալով այն գումարներին, որոնք կանոնաւոր կերպով պէտք է հայթայթվեն ուսուցչական ռոճիկներից և դպրոցական տուրքերից, կը ստեղծի այն գանձարկղը կամ թոշակարգը, որը և կը սկսի մատակարարել թոշակներ ուսուցիչներին կամ նրանց որբացած ընտանիքներին:

Հասարակական օժանդակութիւնը ներկայ դէպքում պէտք է հանդէս գայ ոչ թէ նրա համար, որ անմիջապէս ծախսվի կարօտեալ ուսուցիչների վրա, ոչ, նա պէտք է ծառայի պահեստադրամի կամ հիմնադրամի կազմութեանը:

Անշուշտ, այն յանձնաժողովը, որ կը հրաւիրվի, ունենալով իր ձեռքի տակ թւեր և տեղեկութիւններ, այլ և ուրիշ հաստատութիւնների փորձեր ու դիտողութիւններ, կը պարզի, թէ որքան անխուսափելի և անհրաժեշտ պէտք է լինի հասարակական աջակցութիւնը և որքան մեծ է այդ աջակցութեան աստիճանը:

Ցանկալի է, որ հրապարակի վրա դրված և հասարակական համակրութիւնը գրաւած ուսուցչական թոշակարգի խնդիրը այլ ևս չը ձգձգվի և իր մշակութեան ու իրագործութեան շաւղի վրա դրվի:

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Պեկին, 18 օգոստոսի

Ամենայն օր տեղի են ունենում կառավարութեան անդամների խորհրդակցութիւնը Պեկին եկած փոխարքաների հետ՝ Ինանչիկային պաշտօնի վերակոչելու հարցի մասին: Փոխարքայ Սիսիլիանօզը վճռականապէս առաջարկում է արմատական բարեփոխութիւններ մտցնել հասարակական վարչութեան գործում, նոյնպէս և ներքին ու արտաքին քաղաքականութեան մէջ: Սպասվում են խոշոր փոփոխութիւններ կառավարութեան կազմի մէջ: Պետական գործերը իրապէս կանգ են առել: (Հ. Գ.)

—

Բուէնօս-Այրէս, 18 օգոստոսի

Հանրապետութեան նախագահի, մինիստրների և պատուաւոր հիւրերի ներկայութեամբ օգոստոսի 17-ին փակվեց պանամերիկական կոնգրէսը: Արտաքին գործերի մինիստրը իր ճառում այն միտքը յայտնեց, որ ցանկալի է խաղաղութեան պահպանումը և վիճելի հարցերի լուծումը միջնորդ դատարանի միջոցով: Մինիստրի ասելով անհրաժեշտ է յարգել բոլոր հանրապետութիւնների իրաւունքը: Զինված ոյժի օգնութեան պէտք է դիմել միայն նրա համար, որպէսզի նպաստել արդարութեան յաղթանակին: (Հ. Գ.)

—

Բիլբաօ, 18 օգոստոսի

Բանւորական միութիւնները ընդհանուր գործադուլ սկսեցին: (Հ. Գ.)

—

Զալցբուրգ, 18 օգոստոսի

Սան-Ջուլիանօն և կոմս Էրէնտալը իտալական դեսպան դուքս Աւարնայի ուղեկցութեամբ ցերեկվայ ժամը 4-ին գնացին Իշլ, ուր Սան-Ջուլիանօն հաւանօրէն վաղը կընդունվի կայսրից: (Հ. Գ.)

—

Լիւբլին, 18 օգոստոսի

Համայնական խորհուրդը կրկին քաղաքապետ վերընտրեց Գրիբարին, որին կայսրը չէր հաստատել իր պաշտօնում: Կառավարութիւնը այսօր կազմալուծեց խորհուրդը: (Հ. Գ.)

—

Մոսկվա, 18 օգոստոսի

Օգոստոսի 26-ից մինչև սեպտեմբերի 8-ը բացվում է բուսաբանական այգում պարտիզպանութեան, բանջարաբուծութեան, պտղաբուծութեան և այգեգործութեան ցուցահանդէս: (Հ. Գ.)

—

Եալտա, 18 օգոստոսի

Այրվում է անտառը Ալուպկայից սկսած մինչև Սէմէիզա: (Հ. Գ.)

—

Սարատով, 18 օգոստոսի

Ատկարի գաւառի Մօնաստիրսկի, Նիկոլայեվկա և Բէզօբրազովկա գիւղերում, կրակի հետ անզգոյշ վարվելու պատճառով, հրդեհ է առաջացել, որից այրվել են 170 կալ հացահատիկներով և 75 տուն: (Հ. Գ.)

—

Բագու, 18 օգոստոսի

Սահմանագլխի Վավամ պահակատեղիին մօտիկ պարսկական մաքսանենգների և սահմանապահ պահակների միջև հրացանաձգութիւն տեղի ունեցաւ: Յետ են խլված այն անասունները, որոնց մաքսանենգները ուզում էին անցկացնել Ռուսաստանի սահմանից դուրս: (Հ. Գ.)

—

«Баку» լրագրի ստացած տեղեկութեան համաձայն, ֆինանսների մինիստր Կոկովցեվը մտադիր է պակասեցնել խնայողական գանձարանները պահ տրվող գումարների տոկոսները մինչև 3,6%: Ինչպէս յայտնի է, առաջներում 3,6% էր, յետոյ բարձրացրին 4%-ի, այժմ էլ ուզում են նորից իջեցնել:

—

Գանձակ.—Գիմնազիստ Աւանովը սպանել է պատանի Հաջալիբէկովին: («Б.»)

—

Նիւ-Եօրկ, 15 օգոստոսի

Հրդեհը ուժեղանում է: Ոչնչացել է Ֆլօրա քաղաքը: («Б.»)

ԹՈՒՐՔԻԱ ԵՒ ՊԱՐՍԿԱՍՏԱՆ

Թեհրան, 18 օգոստոսի

Մայրաքաղաքում տարածված է Նէջէֆեան մուշտէիդների հեռագիրը, որով նրանք պախարակում են կառավարութեանը և արգելում հարկեր վճարելու նրան: Բախտիարների դժգոհութիւնը օր ըստ օրէ աճում է Սարդար Ասադի դէմ, որը պարզապէս ձգտում է ինքնակալութեան և դիկտատուրայի: Եփրեմը և Սարդար-Ասադը մոլլաների և առևտրականների ժողով հրաւիրելով պահանջում են նրանցից հաւանութիւն տալ կառավարութեան գործողութիւններին: Հակառակ վերջինիս սնապարծ հեռագիրների, Րաշիդ-ուս-Սուլթանէն հիմնաւոր դիրք է գրաւում դեռ ևս:

Արտաքին գործերի մինիստրութիւնը բողոք է յայտնել ռուսական միսիային Թաւրիզեան խճուղու վրա աւտօմօբիլային երթևեկութիւն հաստատելու համար: Մայրաքաղաքի մամուլը պաշտպանում է բողոքը, մեղադրելով ռուսներին, որ նրանք ձգտում են յափշտակել Պարսկաստանի ճանապարհներն ու հաղորդակցութեան միջոցները: (Հ. Գ.)

—

Փարիզ, 18 օգոստոսի

Լրագրական տեղեկութիւնների համաձայն Էլվիկում գտնվող Ամստրօնգի ֆիրման Թիւրքիա է ուղարկել թնդանօթներ ու ռազմամթերքներ «Աբդիւլ-Համիդ» ականանաւը և «Էրթօղրուլ» զբօսանաւը վերազինելու համար: (Հ. Գ.)

—

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ԹՈՇԱԿԱՐԳ *)

Ես ձեռքի տակ չունեմ ոչ մի վիճակագրական տեղեկութիւն, թէ մեր ներկայ ուսուցիչներից քանիսը քանի տարի պաշտօն են վարել, նոյնպէս և հնարաւորութիւն չը կայ որոշելու լինելիք նվիրատւութիւնների քանակը, որպէսզի այս տվածների հիման վրա կարելի լինէր մօտաւորապէս ճիշդ որոշել, թէ վերը բերված չորս կէտերից իւրաքանչիւրը ինչ չափով դեր ունի կատարելու՝ ուսուցիչների նախկին ծառայութեան համար թոշակ պատրաստելու գործում, և արդեօք բոլոր այդ կէտերն էլ հարկավոր է միաժամանակ գործադրել, թէ՞ նրանցից մի մասը: Օրինակի համար, եթէ ենթադրենք, որ թոշակարգի հաստատութեան տարին 25 հոգի կան, որոնք արդէն 20 տարի որոշ պաշտօն են վարել, նոյնպէս նվիրատւութիւններ են եղել թոշակարգի օգտին 100,000 րուբլի գումար՝ այս գումարն իր տարէ-տարի ստացվելիք տոկոսներով բաւական է այդ 25 հոգուն և նրանց ընտանիքներին ապահովելու ցմահ թոշակ տարեկան 250 րուբլի: Իսկ եթէ այսպիսի ծառայողների թիվը 40 լինի, կամ նվիրված գումարը 100,000 ից պակաս լինի, այն ժամանակ հարկավոր կը լինի դիմել վերը ցոյց տրված միջոցներից միւսներին ևս: Նոյնը պէտք է ասել և 15, 10, 5 տարի ծառայածների համար, որոնց թոշակի իրաւունքի ժամանակը կը լրանայ թոշակարգի հաստատութիւնից 5, 10 և 15 տարի յետոյ:

Ուրեմն իմ ցոյց տված միջոցները նշանակութիւն ունեն իբրև սկզբունքներ, որոնց ընտրութիւնը, գործադրութիւնը և որոնց վրա կատարվելիք բազմատեսակ կօմբինացիաները կախումն ունեն վիճակագրական տեղեկութիւններից, անակնկալ արդիւնքների (նվիրատւութիւնների) քանակից և իրանց՝ ուսուցիչների արտայայտած ցանկութիւնից: Թոշակարգի հաշիւներն անող մասնաժողովը պէտք է ի նկատ առնէ այս բոլոր պայմանները և ըստ այնմ պատրաստէ ժամանակաւոր կանոնների կէտերն այնպէս՝ որ պաշտօնեաների անցեալ ծառայութեան տարիներն ևս ապահովված լինեն թոշակով:

Հասարակական բարեգործութեան (նվիրատւութիւնների) դերը թոշակարգի նկատմամբ չէ սահմանափակվում միայն վերոյիշեալ նպատակով, այսինքն՝ վաղեմի ուսուցիչներին թոշակ մատակարարելու նպատակով: Նրանք ունեն և ուրիշ՝ միայնու դեր: Ներկայ նախագծով՝ պաշտօնեաներից և դպրոցներից բարձում է լինելու՝ հավասար պաշտօնեայի ռոճկի 6 տոկոսին, և այս բարձումներով ու սրանց տոկոսներով ապահովվում է թոշակ՝ 20 տարվայ ծառայութեան համար՝ հավասար միջին ռոճկի կէսին, իսկ 25 տարվայ համար՝ միջին ռոճկի երեք քառորդին: Այսպիսի բարձումներով միայն այսպիսի թոշակ կարելի է ստեղծել. այսպիսի թոշակ ստանալու համար՝ այսքան բարձում հարկավոր է անել: Իսկ եթէ նվիրատւութիւններից կազմվի մի անձեռնմխելի ֆօնդ, որ տարեկան տոկոս բերէ, ենթադրենք, 10,000 ր., այս մշտական գումարի չափով կարելի է մեծացնել թոշակները՝ 30—40 տոկոսով, կամ սրա փոխարէն՝ բարձումները համապատասխան չափով նվազեցնել, օրինակ՝ փոխանակ 6%-ի՝ 5% բարձում անել: Ապագայ կանոնադրութիւնը ընդհանուր ժողովի հաւանութեամբ պէտք է որոշէ, թէ նվիրատւութիւնների տոկոսներից ստացվելիք եկամուտները այս երկու նպատակներից որին պէտք է յատկացնել. բարձումները նվազեցնելո՞ւ, թէ՞ թոշակները մեծացնելու: Ես աւելի նպատակայարմար եմ համարում երկրորդը, ցանկալի համարելով որ 25 տարվայ ծառայութեան համար թոշակը հավասարվէր ամբողջ միջին ռոճկին, իսկ 20 տարվայ համար՝ նրա երեք քառորդին:

Ներսիսեան դպրոցի կանոնադրութիւնը պարունակում է և մի կէտ, որ եթէ թոշակարգի մասնակիցը պաշտօնավարութեան ընթացքում մեռնի կամ անբուժելի հիվանդութիւն ստանայ, որի պատճառով անընդունակ դառնայ (որևէ) աշխատանքի, այս դէպքում նրա ծառայութեան տարիները 5 տարով կավելանան, այսինքն 10 տարի ծառայողը կը ստանայ երրորդ կարգի թոշակ (իբրև 15 տարի ծառայած), 15 տարի ծառայողը կը ստանայ երկրորդ կարգի թոշակ (20 տարվայ ծառայութեան) և այլն: Բայց այս կէտը, ինչպէս փորձը ցոյց տուեց, շատ վտանգավոր է թոշակարգի համար, գլխավորապէս այն պատճառով, որ «անբուժելի հիվանդութիւն» և «աշխատանքի անընդունակութիւն» հասկացողութիւնները, մանաւանդ վերջինը, շատ առաձգական են և կարող են տեղիք տալ թիւրիմացութիւնների և նոյնիսկ զեղծումների: Ուստի ինձ թվում է, թէ ընդհանուր ուսուցչական թոշակարգի կանոնադրութեան մէջ թէ՛ մահվան դէպքերի և թէ՛ անբուժելի՝ որևէ աշխատանքի անընդունակ դարձնող հիվանդութիւնների դէպքում պէտք է նշանակվեն միանվագ օժանդակութիւններ, որոնց քանակը կարելի է որոշել բոլոր տեղեկութիւններն ու ճիշդ թվեր ունենալուց յետոյ միայն:

Թոշակարգը պէտք է ունենայ իր յատուկ կառավարութիւնը, բաղկացած 5 անդամից, որոնցից երկուսին կընտրեն հոգաբարձութիւնները, երկուսին՝ ուսուցիչները, իսկ հինգերորդին՝ նախագահին՝ հոգևոր բարձրագոյն իշխանութիւնը: Կառավարութիւնը կունենայ գործավար, հաշվապահ և գանձապահ, որոնց ինքը կընտրէ ռոճկով: Պէտք է ընտրվի և վերստուգիչ յանձնաժողով՝ 3 հոգուց բաղկացած, մի-մի հոգի հոգևոր իշխանութեան, հոգաբարձութիւնների և ուսուցիչների կողմից: Կառավարութիւնը և վերստուգիչ յանձնաժողովը ընտրվում են 4 տարով, և անդամները վերընտրելի են: Թոշակարգի կառավարութիւնը պէտք է հաստատվի Թիֆլիսում, իբրև կենտրօն տեղում, որտեղ կան բաւական վարկային հաստատութիւններ, որոնց հետ շարունակ գործ պէտք է ունենայ թոշակարգը: Կառավարութիւնը վարում է թոշակարգի բոլոր գործերը, պահում և շահեցնում է գումարները, տալիս է թոշակներ և օժանդակութիւններ, պահում է մանրամասն և ճիշդ վիճակագրական մատեաններ մասնակիցների, նրանց ընտանեկան վիճակի, նրանց պաշտօնավայրերի տեղափոխութեան, նրանց ռոճիկների, տարեկան բարձումների մասին և այլն: Նրա հետ անմիջական յարաբերութեան մէջ են մտնում թէ դպրոցները և թէ մասնակիցները: Վերստուգիչ յանձնաժողովը հսկում է թոշակարգի գործավարութեան կանոնաւորութեան և հաշիվների վրա և իր նկատողութիւնները առաջարկում ընտրողական ընդհանուր ժողովներին: Կարևոր դէպքերում իրավունք ունի միջնորդութիւն յարուցանել՝ արտակարգ ընդհանուր ժողով գումարելու մասին: Գործավարը, հաշվապահը և գանձապահը կը գործեն համաձայն յատուկ հրահանգների, որ կցվելու են կանոնադրութեան: Նրանց գործունէութեան համար պատասխանատու է կառավարութիւնը: Թոշակարգի հաշիվները ամեն տարի պէտք է տպագրվեն և բաժանվեն դպրոցներին և մասնակիցներին: Որևէ գանգատ կառավարութեան դէմ, կամ սրա կողմից դպրոցների ու մասնակիցների դէմ, որևէ թիւրիմացութիւն, որ կարող է ծագել կանոնադրութեան գործադրութեան ժամանակ, որևէ առաջարկութիւն կանոնադրութեան այս կամ այն կէտը փոփոխելու մասին,—ընդհանուր ժողովից ընդունվելուց յետոյ,—ուղղվում են բարձրագոյն հոգևոր իշխանութեան լուծման, որ բարձրագոյն ինստանցիան է թոշակարգի գործերում:

Այսպէս եմ ես ներկայացնում ապագայ ընդհանուր ուսուցչական թոշակարգի կանոնադրութիւնը՝ հիմնական ընդհանուր գծերով: Կանոնադրութիւն մշակելու համար հրավիրվելիք մասնաժողովը անտարակոյս իր տեսակէտները կունենայ թէ՛ սկզբունքային հիմունքների և թէ՛ մանրամասնութիւնների նկատմամբ: Այս յօդվածի նպատակն էր միայն նիւթ մատակարարել թէ՛ այդ մասնաժողովի քննութեան և թէ՛ շահագրգռված անձանց խորհրդածութեան: Ուսուցչական թոշակարգը, կրկնում եմ, ժամանակի պահանջն է, որի լինելուց կամ չը լինելուց մեծ չափով կախումն ունեն մեր դպրոցների առաջդիմութիւնն ու ապագան: Ուստի պէտք է փութալ նրան իրականացնել և սրա համար՝ առանց յետաձգելու հրավիրել այդ թոշակարգի կանոնադրութեան նախագիծը մշակող յանձնաժողով:

Ստ. Մալխասեանց

---

*) Տես «Մշակ» №№ 176 և 181.

Սալօնիկ, 14 օգոստոսի

Ալբանիայի գործերի դրութեան մասին Տուրղութ փաշայի զինուորական մինիստրին ուղարկած զեկուցագրի համաձայն, Ալբանիայի այն մասերում, որտեղ զօրքեր են մտցված, հանդստութիւն է տիրում։ Այնուամենայնիւ Ալբանիան կարիք ունի ամենաարմատական ռէֆօրմների։ Տուրղութ փաշայի կարծիքով՝ անհրաժեշտ է Ալբանիայում ձմերելու թողնել ամբողջ էքսպեդիցիօն բանակը։

Չորս բատալիօն կը մնան Սկիւտարում՝ իսկ մնացածները կը տեղաւորվեն Դիակօվօյում և Ֆերիզօվիչում։

Տուրղութ փաշան ճանապարհվել է Էլբասան, ուր նոյնպէս զինաթափ են անում ալբանական ազգաբնակութեան։ Այնտեղից նա կը վերադառնայ Մօնաստիր։

Կոսսօվայի վալին ներքին գործերի մինիստրութեան տեղեկութիւն է տուել, որ սերբ և բուլգար ազգաբնակութիւնից գրաւված է մեծ քանակութեամբ զէնք։

Ոստիկանութիւնը աշխատում է դուրս քշել Մակեդօնիայի սահմաններից հելլենահպատակներին։

Սալօնիկում յունական գիմնազիայի երկու ուսուցիչներ առաջարկութիւն են ստացել թողնել կայսրութեան սահմանները վեց օրվայ ընթացքում։ («Р. С.»)

—

Թէհրան, 14 օգոստոսի

Պաշտօնապէս հաղորդվում է, որ ապստամբ վերսինցիների ղեկավար աւազակ Րաշիդ Սալթանէն ջարդվել է։ Սակայն մասնաւոր տեղեկութիւններն էլ ասում են, որ Րաշիդ Սալթանէն ամրացել է մի կիրճում և այնտեղից աջող կռիւ է մղում կառավարչական զօրքերի դէմ։

Թէհրանից ամեն օր զօրքեր են ուղարկւում հարաւ։ Այս հանգամանքը կառավարութեան հաղորդածների ճշմարտութիւնը կասկածների է ենթարկում։

Սաթթար-խանի առողջութիւնը բարդանում է։ Առողջանալուց յետոյ նա մտադիր է անցնել Ռուսաստան։ («Р. С.»)

ՊՈԼՍԱԿԱՆ ՆԱՄԱԿՆԵՐ

Կ. Պոլիս, 8 օգոստոս

Փոխանակ մէկի՝ այժմ ունինք երկու հրատարակչական ընկերութիւն՝ «Հայոց Հրատարակչական» և «Եգիպտական» ընկերութիւնները։ Երկուքն ալ իրենց նախագահն ունին Պոլսի պատրիարքը։

Ինչո՞ւ այս երկուորականութիւնը։ Անհասկնալի հարցը, որ անըմբռնելի է։ Մեր գործունէութեանց մէջ ցարդ բաժանումներ կամ աւելի, ճիշդը, հակառակամարտութիւններ անխուսափելի դարձած են. բերանը խօսք մը ունեցողը, գլուխը քիչ մը խելք ունեցողը, գրիչը ձեռք բռնողը, խմբագրողը, քարոզիչը կը խօսին, խօսած են ուժերու չէզոքացումին դէմ, հակառակամարտութեան դէմ, և սակայն ձեռնարկ մը եղաւ թէ ո՛չ՝ առաջին օրուընէ երկու համանման ուժեր կեցած կը տեսնենք դէմ դիմաց՝ զիրար չէզոքացնելու համար։

Գոնէ հրատարակչականի մասին երկուորականութիւնը անգոյ պէտք է ըլլար, որովհետև ձեռնարկները երկուքն ալ հայ մտաւորականութեան կողմէ կուգան։ Վախ կայ, որ շատ չանցած՝ երրորդ հրատարակչական մըն ալ երեւան գայ, ու կազմուի երրորդութիւնը, այդ խորհրդաւոր թիւը, որ մեր կեանքի մէջ անխուսափելի է։ Կրօնքի մէջ ունինք երրորդութիւն. հայրապետութեան մէջ ունինք՝ Էջմիածին, Աղթամար, Սիս կաթողիկոսներ. ազգի մէջ ունինք՝ լուսաւորչական, հայ-կաթոլիկ, հայ-բողոքական հատուածականութիւն. քաղաքական կուսակցութեանց մէջ ունինք նոյնպէս երրորդականութիւն. գլխաւոր հատուածականութիւն ունինք երեք պետութեանց մէջ, ու դեռ կարելի չէ գիտնալ, թէ ինչե՞ր պիտի ունենանք երրորդականութեան անունով։ Կը զարմանամ թէ ինչպէս պատրիարքութիւնը միացած է երկուորականութեան մէջ։

«Հայոց Հրատարակչականը» իրեն եկամուտի աղբիւր ունի միմիայն անդամակցութեան ամսաբաժինները. «Եգիպտականը» ունի, առաջին օրուընէ իսկ, 500 ոսկի. ի հարկին կարելի պիտի ըլլայ, շատ դիւրութեամբ, անոր վրայ աւելցնել 1500 ոսկի ալ։ Դրամագլուխի այդ խայծը իրեն կը քաշէ ջօջեր. իր վարչական մարմինները ունեւորներ են, հիմնադիրները՝ դրամագլուխի տէրեր։

«Եգիպտականը», լսուածի նայելով, հրապարակ պիտի հանէ. Շիրվանզադէի յոբելեանի առիթով, հատոր մը, ուր պիտի ըլլան քննադատականներ կամ գնահատականներ նոյն հեղինակի գրական մէկ գործի մասին, բոլորն ալ թիւրքահայ գրողներու կողմէ։ Հաւանական է, որ գործը ինքնին հետաքրքրական ըլլայ։ Այժմէն կանխեմ ըսել, որ Շիրվանզադէի մասին թիւրքահայ գրողներու կարծիքը բոլորովին համապատասխան չէ Լէօի յայտնած քննադատական թուղթերուն։

«Հայոց Հրատարակչականը» իր անդրանիկ հատորը լոյս պիտի հանէ յունուարին։ Այդ գործին պիտի մասնակցին նոյնպէս թիւրքահայ գրողներու լաւագոյնները։ Հատորը պիտի ըլլայ զուտ գրական և պիտի կազմէ հրատարակչականի դրամագլուխին առաջին մասը, թիւրքահայ մտաւորականութեան քրտինքովը։ Այդ գործին համար հրաւէր ղրկուած է 50-է աւելի լաւագոյն գրիչներու։

Ցաւողութիւն երկուքին ալ. բայց ամենէն աւելի մաղթելի է, որ երկու հրատարակչականի փոխանակ ունենանք մէկ հրատարակչական, և այսուհետև «միութիւն» թիւը ըլլայ խորհրդանշան մեր հաւաքական գործունէութեան։

Այս շաբթու լոյս ելաւ ուրիշ հատոր մը, «Գրիգոր Օտեան»։ Անոր մէջ ամփոփուած են այդ հոյակապ հայուն սահմանադրական խօսքերն ու ճառերը, ու նաև դամբանականներ, որ խօսած է Օտեան, ժամանակին, սահմանադրական սկզբունքները յղացող, մշակող և գործադրող քանի մը նշանաւոր հայերու դագաղին առջև։

Իր սահմանադրական խօսքերը, քաղուած ատենագրութեանց մէջէն, որքան որ իբրև պաշտպանութիւն կամ արտայայտութիւն սկզբունքներու առանձին մէջ բերուած են առանց ընդդիմաբաններու խօսքերու, շատ բան կը հասկցնեն։ Իսկ եթէ, պահանջուածի համեմատ, ուրիշներու խօսքերն ալ մէջ բերուէին, այն ատեն պէտք պիտի ըլլար ատենագրութիւնները ամբողջովին տպագրել։ Այդ մտածումով, քիչ մը ներողամտաբար, կը տեսնուի, որ գործը ինքնին ամբողջութիւն ունի իր մէջ։

Ու շատ յարմար ժամանակով հատորը դուրս կուգայ։ Նոր սերունդը, այժմ սահմանադրական շրջանի մէջ, իսկապէս շատ տարտամ գաղափար ունի Օտեանի մասին, որ հեղինակն ու գործադիրը եղած է ազգ. սահմանադրութեան և մեծ մասնակցութիւն մը ունեցած է Միդհատեան սահմանադրութեան։

Հրատարակիչն է վանցի ուսուցիչ մը, Միքայէլ Կազմարարեան, որ կը խոստանայ լոյս հանել ուրիշ հատոր մը, նոյնպէս «Գրիգոր Օտեան», անոր մէջ ամփոփելով զանազան գրուածքներ, իւրաքանչիւրն ունենալով իր շահեկանութիւնը։

Այս ելած հատորին մէջ կայ Խրիմեան Հայրիկի մէկ նամակը, որ յորդոր տուած է հրատարակչին ժողվել Օտեանի գիր ու ցան գրուածները Սրուանձտեան Գարեգին եպիսկոպոսի միջնորդութեամբը. ուրիշ երկու գրուածքներ ալ, միևնոյն գրիչէ (Հրանդ), որոնց մին կը խօսի Օտեանի կեանքին ու կոչումին վրայ, երկրորդը՝ կը նշանակէ այն դերը, որ Օտեան ունեցած է ազգ. սահմանադրութեան մէջ։ Իսկ ուրիշ գրուածք մը, ծածկանունով, ուխտագնացութիւն մըն է Օտեանի շիրմին, շատ սրտագին և յուզումնալից բովանդակութեամբ։

Այս օրերս թիւրքերէն շաբաթահանդէս մը հրատարակած է Օտեանի լուսանկարը Միդհատ փաշայի հետ, որուն խորհրդականն ու մտերիմն եղած էր այդ հայը։

Օտեանի գործակցութիւնը Միդհատ փաշայի սահմանադրութեան մէջ՝ ցարդ անծանօթ կը մնայ հանրութեան. և տակաւին կարելի չեղաւ ճշդել, թէ ինչ ձևով կատարուած է ատ։ Ժամանակակիցներէն շատերը մեռած են արդէն, ողջ մնացողներէն և ո՛չ մին հաճեցաւ բան մը գրել, իսկ նոր սերունդը բոլորովին անծանօթ կը մնայ այդ գործակցութեանը։ Այդ ամենուն հետ կայ գլխաւոր դժուարութիւնը, այսինքն թէ ինչ որ եղած է՝ գաղտնի է։ Միդհատ փաշա ինքը միայն կրնար բան մը ըսել, և կամ Օտեան։ Բայց երկուքն ալ չկան արդէն, մեռած տարագրանքի մէջ, իրենց սահմանադրական մտածումներուն և երկրին ազատագրութեանը սիրոյն չարաչար զոհեր եղած։

Շահէն

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԻՆՉՈ՞Ի ՀԱՅԵՐԷՆ ՉԸ ԳԻՏԵՆ

Կան դպրոցական խնդիրներ, որ իրանց վրա զուտ հայկական կնիք են կրում, արտացոլում են իրանց մէջ մեր իրականութեան դրոշմը, շունչը։ Եւ յիրաւի. տարօրինակ չէ՞ր լինի միթէ շվէյցարական միջնակարգ դպրոցաւարտների նկատմամբ արտայայտվել, որ նրանք ֆրանսերէն չը գիտեն, ուստի և միջոցներ պէտք է ձեռք առնվեն այդ չարիքի առաջն առնելու համար։ Տարօրինակ չէ՞ր լինի արդեօք ուղղագրութեան միօրինակութեան խնդիր դնելը որևէ եւրօպական դպրոցական կեանքում այն մտքով, ինչպէս գոյութիւն ունի մեզանում, մի դասարանում ուղղագրութիւնը ու-ով, միւսում վ-ով, երրորդում՝ չը գիտենք ինչպէս։ Դրանք զուտ հայկական երևոյթներ են, բայց առաւել ևս հայկական է այն վերաբերմունքը, որ մենք ցոյց ենք տալիս դէպի այդ խնդիրների լուծումը։

Ընդհանուր երևոյթը մի կողմն է դրվում, շեշտվում մասնակին. ու թւում է, թէ մասնակին լուծելով կը լուծվի ըստ ինքեան և ընդհանուրը։ Նկատի չէ առնվում կամ հաւանօրէն է դիտվում այն հանգամանքը, որ վերոյիշեալ մասնակի խնդիրները կամ նրանց հետ կապված առաւել մասնակի երևոյթները հետևանք են մի ընդհանուր, համայնապարփակ խնդրի և երևոյթի. դա մեր դպրոցական կազմակերպութիւնն է իր դաստիարակչական և կրթական ուրոյն բովանդակութեամբ, որ ծնունդ է տալիս բնականապէս յիշածս երևոյթներին՝ լեզու չիմանալուն, խառնափնթոր ուղղագրութեանը և այլն, և այլն։

Այստեղ մեզ հետաքրքրում է հայ միջնակարգ դպրոցաւարտների հայերէն չիմանալու պարագան. մենք նպատակ ունենք ցոյց տալ, որ այդ երևոյթը խորապէս կապված և կցորդված է դպրոցական ընդհանուր կազմակերպութեան ոգու և ուղղութեան հետ։ Ապարդիւն մի աշխատանք է մասնակի, երկրորդական ու անկարևոր պատճառներ մէջտեղ գցել և մեղադրանքը փաթաթել այդ պատճառների շնչին։

Այդ հարցի առիթով մինչև այժմ մամուլի մէջ արտայայտված կարծիքներից այն եզրակացութիւնը կարելի է դուրս բերել, որ մեղաւոր են հայոց լեզուի ուսուցիչները, որոնք հայերէն չեն սովորեցնում բաւարարաչափ՝ արհամարհելով գլխաւոր աշխատանքները։ Մինչև անգամ ընդհանուրից յարգված հայագէտ մի ուսուցչի անունն էլ մէջտեղ նետվեց իբրև քաւութեան նոխազ, որ դպրոցաւարտները չը գիտեն հայերէն, անսխալ չեն կարող արտայայտվել մայրենի լեզուով։ Այդ ուսուցիչը Ստ. Մալխասեանցն է, որ այս դէպքում հանդէս է գալիս իբրև տիպական ներկայացուցիչ հայերէն լեզուի դասատուների։ Բացի այդ մեղադրանքից, ուղղված՝ ուսուցիչների դէմ, արտայայտվեց և՛ այն կարծիքը, որ ծխական դպրոցներից միջնակարգ դպրոց եկողները լեզուական պաշար չեն բերում. հիմքը դրվում է վատ, վատ էլ լինում է վախճանը։

Կարելի՞ է արդեօք համաձայնել այդ կարծիքների հետ և որքան նրանք համապատասխանում են իրականութեանը։

Որ մեր միջնակարգ դպրոցաւարտները թոյլ են հայերէնից՝ դա իրողութիւն է։ Բայց ցանկալի է իմանալ, թէ ո՞ր առարկայից նրանք ուժեղ են՝ մաթեմատիկայի՞ց, բնագիտութիւնի՞ց, կրօնի՞ց... Եւ ո՛չ մէկից։ Որ ուսուցիչներն էլ մեղաւոր են այդ պարագայում, դա կասկածից դուրս է։ Մենք չունենք ուսուցչանոցներ, որ մեզ տային կանոնաւորապէս պատրաստված ուսուցիչներ։ Բայց յատկապէս լեզու չիմանալու խնդրում դժուար է անհատ ուսուցիչներին մեղադրելը։ Մայրենի լեզուն ներքին հոգեկան մի երևոյթ է, որ իր վրա խորապէս կրում է ժողովրդական ստեղծագործութեան կնիքը։ Այդ ստեղծագործութեան մի մասնիկը դառնալու համար հարկաւոր է ոգևորութիւն, շունչ, եռանդ և յարմարաւոր մթնոլորտ լեզուական շէնքի կառուցման գործում։ Մեքենական շարադրութիւնները չը սիրված թեմաներով կամ ձանձրալի թելադրութիւնները՝ լեզու չեն սովորեցրել և չեն սովորեցնի։ Դժուար է, ի հարկէ, զուտ դպրոցական շարադրութիւնների ու թելադրութիւնների արժէքը ժխտել, քանի որ նրանք ևս վերջ ի վերջոյ նպաստում են լեզուի գիտութիւնը անգիտակցական վարժութիւնների ու սովորոյթի աստիճանին հասցնել։ Սակայն աշակերտների ինքնագործունէութիւնը խրախուսող գեղարուեստական հրապարակախօսական բնոյթ ունեցող դպրոցական ընկերակցութիւններն ու հանդէսները, թերթերն ու ռէֆերատներն են, որ աշակերտներին դարձնում են ոչ թէ կրաւորական ընդունողներ, այլ ստեղծագործող և շինարար աշխատողներ։ Մենք գիտենք մի միջնակարգ դպրոց, որ որոշ շրջանում տուել է հայերէն լեզուին տիրապետող ընթացաւարտներ՝ չը նայած որ հայերէն լեզուն սովորեցնող ուսուցիչները եղել են թոյլ և ապիկար... Պատճառը, գլխաւոր պատճառը յիշածս հանգամանքների ներկայութիւնն էր այդ դպրոցում, թէպէտև դպրոցական վարչութեան կողմից հալածական էր ամեն ինչ, որ շեշտում էր աշակերտների ինքնագործունէութիւնը, նրանց լեզուական ստեղծագործութեան եռանդն ու ոգևորութիւնը...

Շեշտեցէք աշակերտների լեզուական ինքնագործունէութիւնը, թոյլ տուէք ազատօրէն ստեղծագործել լեզուի բնագաւառում, և նրանց պասիւական ընդունակ կը լինի ոչ միայն լեզուն իմանալ, այլ և լեզու ստեղծել, զարգացնել, ճոխացնել։

Այս նկատառումով ծխական դպրոցներին մեղադրելը միջնակարգ ընթացաւարտների լեզու չիմանալու գործում՝ ըստ ինքեան հերքվում է։ Մայրենի լեզուին տիրապետելը, որքան էլ տարօրինակ թւայ այս, հասուն և գիտակցութիւնը զարգացած հասակում է տեղի ունենում։ Մենք քիչ չը գիտենք այնպիսի տղաներ, որոնք ռուսական դպրոցից եկել են հայ դպրոց և տիրապետել հայերէնին՝ նախապէս ոչինչ չիմանալով։

Սեփական մեղքը և ապիկարութիւնը ուրիշների վզին փաթաթելը թոյլ մարդկանց սովորոյթն է։ Ծխական դպրոցները չեն մեղաւոր, այլ մեր դպրոցական մթնոլորտը, որ սպանում է աշակերտի ինքնագործութեան ոգին...

Ա. Տ.

Ն. Մ. ԳԱԲՈՒՆԻԱ-ՑԱԳԱՐԵԼԻԻ ԹԱՂՈՒՄԸ

Երէկ, ամսիս 19-ին, տեղի ունեցաւ վրաց տաղանդաւոր դերասանուհի Ն. Գաբունիա-Ցագարելլի թաղումը։

Առաւօտեան ժամը 10-ին սկսվեց պատարագը Վերայի ս. Նիկողայոս եկեղեցում և վերջացաւ ժամը $11\frac{1}{2}$-ին։

Դագաղը եկեղեցուց դուրս բերին հանգուցեալի ընկեր-ընկերուհի դերասանները և Օլգինսկայա փողոցով և ապա Գոլովինսկի պրօսպէկտով, երաժշտութեան նուագածութեամբ, հասցրին Արքունական թատրոնի առաջ, ուր և կատարվեց հոգեհանգիստ։ Ապա դագաղը հանգստացրին Արտիստական Ընկերութեան թատրոնի առաջ, ուր նոյնպէս հոգեհանգիստ կատարվեց։ Այդտեղից հանգուցեալի դիակը բերվեց Դվօրցովայա փողոցը, ուր Վրաց թատրոնի առաջ վրաց հոգևորականութիւնը և երգեցիկ խումբը կատարեցին հանդիսաւոր հոգեհանգիստ, որից յետոյ նոյն տեղում վրացերէն լեզուով մի շատ զգացված դամբանական խօսեց վրաց յայտնի ողբերգու դերասան Լադօ Ալեքսէեվ-Մեսխիեվը։ Ապա դագաղը նոյնպէս ձեռնաբարձ տարվեց Սօլդատսկի բազարով, Միքայէլեան և ապա Աւճալեան փողոցներով դէպի Կուկիայի ուղղափառների ս. Նունէի գերեզմանատունը։

Այդտեղ դամբանականներ կարդացին՝ քահանայ Կարբէլաշվիլին, վրաց «Թէատրի դա Ցխովրէբա» թատրոնական հանդէսի խմբագիր Իմէդաշվիլին, դերասան Իվանիձէն, երիտասարդ դրամատուրգ Գլախաշվիլին։

Հայ մամուլի և դերասանների կողմից խօսեց վրացերէն լեզուով դերասան Գ. Միքաղեան-Պեգէվանօվը։

Ապա երաժշտութեան նուագածութեամբ դիակը ամփոփվեց վրաց յայտնի գործիչների գերեզմանների շարքում, ոչ շատ հեռու հանգուցեալ Գաբունիայի ամուսին դրամատուրգ Ա. Ցագարելիի դամբարանից։ Թաղման թափօրին մինչև գերեզմանատուն ուղեկցեցին վրացի դերասանները, գրական ու հասարակական գործիչները, հայ դերասանները և հայ գրական ու հասարակական գործիչները և մեծ բազմութեամբ ժողովուրդ։ Պսակներ և ծաղկեփնջեր կային՝ Վրաց Դրամատիկական Ընկ., վրաց բեմի սիրողներից, վրաց դերասանական խմբից, վրաց մամուլի այլևայլ օրգաններից, Վրաց մէջ Գրագիտութիւն Տարածող Ընկերութիւնից և բազմաթիւ պսակներ մասնաւոր անձերից։ Թարմ ծաղիկներից մի ծաղկեփունջ դրեց հանգուցեալի դագաղի վրա Տ. Նազարեանը «Տարազ» գրական-գեղարուեստական սալօնի կողմից հետևեալ վերտառութեամբ՝ «Դիցուհի Գաբունիային»։ Այլևայլ անձերի կողմից արտասանած դամբանականները բոլորը պարունակում էին այն միտքը, որ յանձին հանգուցեալի վրաց բեմը կորցրեց իր լուսատու և պայծառ աստղերից մէկին և որ այն բացը, որ գոյացաւ հանգուցեալի մահվամբ, դեռ երկար ժամանակ չի փոխարինվի որևէ մէկի կողմից։ Թաղման արարողութիւնը վերջացաւ մօտ ժամը 3-ին և մարդիկ բեկված սրտով հեռացան նրա գերեզմանի մօտից։

Յ. Գ.

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Մօզդօկ, 15 օգոստոսի

Տեղիս ս. Ստեփաննոս եկեղեցու ծխատէր Գէորգ քահանան, շատ ժամանակ չէ անցել այն օրից, մի հայ-կաթոլիկ երիտասարդի լուսաւորչական դարձրեց։ Կիրակի ճաշվա պատարագին, ահագին երկսեռ խուռն ծխականների ներկայութեամբ և քառաձայն երկսեռ խմբի մասնակցութեամբ, քահանան պատարագը ընդհատեց և մերկացրեց դաւանափոխին, կնքահայրն էլ կանգնեցրեց հաստ կերօնները ձեռքը տուած, բարձրացրեց սեղան ու իջեցրեց. ապա, սկսեց մկրտութեան խորհուրդը կատարել...։ Ծխականների մէջ իրարանցում ընկաւ, հեռացան, հեռացաւ և երգեցիկ խումբը։ Քահանան շարունակեց պատարագը. «Հայր մերին» դարձաւ դէպի սակաւաթիւ ծխականները, վիրաւորված որպէս թէ, քարոզ խօսեց...

«Տեսա՞ք ինչ արեցի. մենք պէտք է բոլորս ուրախանանք, որ ուրիշ ազգից... մեր հաւատի բերանք, իսկ տգէտները հեռացան, մանաւանդ ձեր վարժապետ-խմբապետը. պիտի ժողով անէք և այդպիսիներին պատժէք...»։ Սրանով էլ վերջացրեց պրօվօկատորական քարոզը. և ինչ էք կարծում, քահանայի այդ գրգռիչ խօսքերից յետոյ՝ ծխականները ուզում էին վրէժ լուծել վարժապետից։ Սակայն շատ հետաքրքրական է իմանալ, թէ այդ քահանան ո՞ւմ իրաւունքով և ո՞ր հրահանգի վրա հիմնված թոյլ է տալիս իրան մի անգամ մկրտվածին երկրորդ անգամ մկրտել և դրոշմել։

Ես-եմ

—

Խանքենդ-աւան, 15 օգոստոսի

Խանքենդում ապրում են ռուսներ, հայեր և թուրքեր միասին։ Առաջինը համարվում է բնիկ, իսկ միւսները գաղթականներ։ Ռուսների մէջ տարածված է արբեցութիւնը։ Հանդիսաւոր օրերում, առաւելապէս զատկական տօներին, յաճախակի լինում են անկարգութիւններ։ Գինովցած ռուս ամբոխը ծեծում է հայի կամ թուրքի, և դրանից առաջանում է ընդհարում և արիւնհեղութիւն։ Այսօր գինովցած մի ռուս փողոցում ծեծում է պատի տակ շուաքում նստած մի գաղթական հարաբեցու։ Փողոցով անցնող երկու հայ երիտասարդ այդ մասին բացատրութիւն են պահանջում, թէ ինչու նա ծեծում է ոչ ոքի հանգստութիւնը չը խանգարող գիւղացուն. ծեծողը յարձակվում է և դրանց վրա, որին օգնութեան են գալիս և մի քանի ստրաժնիկներ։ Հայերը ցանկապատերից փայտեր հանելով պաշտպանողական դիրք են բռնում։ Այդ բոպէին վրա է հասնում պրիստավը, հայերին ձերբակալում և բանտարկում է։ Կրկնակի ծեծվել է և անմեղ հարաբեցին, որ և պառկած է անկողնում։ Հայերը և թուրքերը գնացին բողոքելու եղած այդ անկարգութիւնների դէմ։

*

ՀՈՒՆՁԻ ԴՐՈՒԹԻՒՆԸ

Նոր-Բայազէտ, 10 օգոստոսի

Սովորաբար, ինչպէս նախկին տարիները, այս տարի ևս դուրս գնացի դաշտը դիտելու յատկապէս հունձի դրութիւնը։ Այս տարի հողի արգասաւորութիւնը ոչնչով չը պսակեց հողագործի դժոխային աշխատանքը և դա մի փոքր լքումն է առաջ բերել *) ժողովրդի մէջ, քանի որ գարնանը ցանքերը կատարվեցին բարենպաստ հանգամանքներում, իսկ վերջում ենթարկվեցին զանազան պատահարների և բնական աղէտների։

Ցանքերը, նայած նրանց աճեցողութեան աստիճանին, կարելի է բաժանել 3 առանձին մասերի, որոնցից իւրաքանչիւրն ունի իր առանձին տեսքը և արդիւնքի առանձին չափերը։

Առաջին տեսակը, որ ընկած է տափարակներում և ենթարկված երաշտի ազդեցութեան, ոչ մի բանի նման չէ։ Այդպիսի հողաբաժիններում ցանվածը իր սերմը հազիւ կարող է արտադրել,—հասակը կարճ, վտիտ, բուսել է հատ-հատ, նօսր։ Այդպիսի հացաբոյսը փետում են ձեռքով, որովհետև այնքան կարճ է, որ ոչ գերանդին է բռնում քաղելու և ոչ էլ կարելի է լինում կարգին խուրձ կապել (մեզանում անխտիր խուրձ են կապում թէ խոտը և թէ հացաբոյսը՝ խոտից մանած և ոլորած չուվերով)։

Երկրորդ տեսակի ցանքերը, որոնք ընկած են դաշտային մասերում, համեմատաբար բաւարար են. դրանց նոյնպէս կարելի է երկու մասի բաժանել՝ 1) արևակէզ տեղեր և 2) հովասուն վայրեր։ Առաջին տեղերում ցանքերը թէպէտ բարձրահասակ չեն, սակայն կարելի է և գերանդիով հնձել և միջակ արդիւնք ստանալ, քանի որ հակառակ հացաբոյսի ցողունի բարձրութեան՝ հասկերը մասամբ լիքն են հատիկներով, չը նայելով որ երաշտը մի փոքր խանձել և կուչ է բերել հացաբոյսը։ Այն ինչ՝ հովասուն վայրերում հացաբոյսը իր կանոնաւոր դրութեան մէջ է. ցողունի բաւարար հասակ, պարարտ և ընտիր տեսակի հասկեր՝ միապաղաղ, հաւասար բարձրութեամբ, թէպէտ հասկերը այնքան էլ լիքը արդիւնաբեր չեն կամ «ճթուռն» չեն, ինչպէս տեղացիք են ասում։

Երրորդ տեսակի հողամասերը, որոնք տարածվում են սարերի ստորոտներում, լաւ պատկեր են ներկայացնում՝ բարձր ցողունով, նոյնպէս և երկար հասկերով, որոնք ալիքանման տատանվում ու տարուբերվում են լեռնային թեթև զեփիւռից և մի խուլ շվվոց առաջացնելով փողփող են՝ մարդու սիրտը ուրախութեամբ լցնելով։ Սրանք աւելի քան լաւ տեսակի արտերն են, յատկապէս գարու ցանքերով (մեզանում բարձրադիր տեղերում բացառապէս գարի են ցանում, ի նկատի ունենալով ցուրտ կլիման, քանի որ ցորենը կարող է մրսել և չը հասունանալ), որոնք կարող են նշանաւոր չափերով արդիւնք տալ և մի փոքր մխիթարական լինել հողագործ դասին։

Սակայն ընդհանրապէս վերցրած՝ կարող ենք բացարձակապէս յայտնել, որ այս տարվայ մեր հունձը միջակ տեսակի է լինելու, որը մասամբ միայն կարող է թեթևացնել հողագործի դառն վիճակը։ Դառն ենք ասում, քանի որ անցեալ տարվայ առատութեան համեմատ մեր հողագործ դասը այս տարի էլ լի յոյսերով սկսեց իր ցանքերը, բայց վերջը հիասթափվելով՝ ցաւեց իր աշխատութեան վրա, որը՝ ըստ արժանոյն չը վարձատրվեց, թող թէ նա մեծ յոյսեր էր տածում իր անտեսութեան զանազան բացերը գոցելու այս տարվայ հողային արգասաւորութիւնից։ Բայց ե՞րբ է մեր հողագործութիւնը երկու տարի իրար վրա ազատ շունչ քաշել... Այսքանը հունձի մասին, իսկ հացահատիկների արդիւնաբերութեան, չափի և որակութեան մասին առայժմ դրական բան չէ կարելի ասել, քանի որ հացաբոյսի ծեծը—կասելը—դեռ ևս տեղի չէ ունեցել։

Այժմ արդէն հացաբոյսերը հասունացել և հնձվում են տափարակներում, որտեղ մեծ մասամբ ձեռքով են փետում հացաբոյսը։ Ապա շուտով կը սկսվի հունձը դաշտային մասերում, իսկ մի փոքր միջոց անց՝ կը հասունանայ հացաբոյսը նաև սարերի ստորոտներում։ Աշխատանքը եռում է ամեն ուրեք, մի կողմից խոտն են կրում, միւս կողմից հացաբոյսը հնձում։ —Տափարակներում փետոցն են անում կանայք, աղջիկներ, նոյնիսկ երեխաներ՝ առանձին օրավարձով։ Սայլորդների վարձագինը այս տարի կրկնակի չափերի է հասել. այդ՝ մասամբ առաջ է եկել խոտի գերազանց արդիւնքից։ Մի սայլը խոտ է կրում օրը մի անգամ՝ հեռու տեղերից, երկու անգամ մօտ տեղերից։ Վարձագինն է մի սայլ խոտ կրելու համար 1 ր. 20 կոպ.՝ մօտ տեղերից, և 1 ր. 50 կ.՝ հեռաւոր վայրերից։ Մեր խոտատեղերը հեռու են քաղաքից աւելի քան 10 վերստ։

Գ. Սենանեան

ԽՈԼԵՐԱ

◆ Բիւլլեթեն.—Օգոստ. 18-ի առ. ժամը 9-ից մինչև օգոստ. 19-ի առ. ժամը 9-ը Թիֆլիսում խոլերայով հիւանդացել է 1 հոգի, իսկ խոլերանման հիւանդութեամբ՝ 1 հոգի։ Հիւանդանոցում կային 19 հոգի, աւելացել է 1, մեռել են 3, ներկայումս կան 17 հոգի։

---

*) Ցաւալիապէս հացի գնի միանգամից բարձրանալու վերաբերմամբ, որով տեղական ազգաբնակութիւնը վհատվել է։

◆ Օգոստոսի 18-ին խոլերային նշաններով Թիֆլիսում հիւանդացել են և ուղարկվել բարակները. 1) Միքայէլեան փող. № 88 տանը՝ քաղաքապահ Աֆանասի Կոցովչենկո (բժշկվում է տանը)։ 2) Կօնստանտինօվսկայա փող. № 12 տանը՝ Թիֆլիսեցի Ալեքսանդրա Մամադովա Ֆլորա $1^{1}/_{2}$ տար.։ 3) Բէլինսկայա փող. № 50 տանը Մարֆա Սեմէօնօվնա Սուխարկովա։ Հիւանդացածների բնակարաններում ախտահանութիւն է կատարված։

◆ Թիֆլիսի քաղաքային 2 րդ պաստառանում՝ Դիղոմբէում պատահել է խոլերային մի դէպք։ Ապաստարանի շէնքը խնամքով ախտահանութեան է ենթարկված։

—

18 օգոստոսի

Պետերբուրգ.—Մի օրվայ ընթացքում հիւանդացել են խոլերայով 62, մեռել 22. առողջանում են 683 հոգի։

Հռոմ.—Մի օրվայ ընթացքում Ապուլիայի զանազան մասերում հիւանդացել են խոլերայով 14, մեռել 15 հոգի։

Օդեսսա.—Կովկասի բժշկական մասի կառավարչի նախագահութեամբ ժողով է կայացել ժանտախտի դէմ կռւելու միջոցներ որոնելու համար։ Անհրաժեշտ է համարվել ժանտախտով վարակված վայրերից եկող նաւերի վրա հսկողութիւն նշանակել։

Տուլա.—Կայացել է սանիտարական գործադիր կոմիսիայի ժողովը, տեսչութիւնների և քաղաքների ներկայացուցիչների մասնակցութեամբ։ Պարզվել է, որ խոլերան տարածվել է 53 գիւղերում։ Վերջին ժամանակներս համաճարակը աստիճանաբար թուլանում է։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

◆ Լուր է պտտում, որ կովկասեան շրջանի ինտենդանտութեան գործերի քննութեան համար սենատորական ըէվիզիան կը յանձնվի այն սենատորներից մէկին, որոնք վերջացրել են քննութիւնները մի ուրիշ շրջանում։

◆ Թիֆլիսի խուզարկու ոստիկանութիւնը երևան է հանել խարդախիչների մի կազմակերպութիւն, որը իր ցանցերը տարածել է ոչ միայն ամբողջ Կովկասում, այլ և նրա սահմաններից դուրս։ Նիկոլայէվսկայա փողոցի վրա № 101 տանը ոստիկանութիւնը գտել է մի լաւ կահաւորված բնակարան և նրա մէջ բազմաթիւ շքեղ ու հասարակ հագուստներ կանանց և տղամարդկանց համար ու զանազան տեսակի գործիքներ։ Այդտեղ գտել են նաև մեծ քանակութեամբ խաղաթղթեր, որոնք ցոյց են տալիս, որ այդտեղ թղթախաղի տուն է եղել դարձված։ Խմբի անդամներից մի քանիսը արդէն կալանաւորված են։

◆ Օգոստոսի 16-ին լրացաւ Վրաստանի էկզարխ արքեպիսկոպոս Իննոկէնտիի ծառայութեան 25-ամեակը։ 25-ամեայ յոբելեանի առիթով ստացված են բազմաթիւ հեռագիրներ ու շնորհաւորութիւններ։

◆ Խուզարկու ոստիկանութեան բաժանմունքի գործակալները օգոստոսի 17-ին կալանաւորել են պարսկահպատակ Հաջի Մամէդ-օղլուն, որ ապրում է Բօրչալուի գաւառի Գիւլ-Արխ գիւղին մօտիկ։ Նա մի քանի ուրիշ անձանց հետ միասին 9 օր առաջ Գիւլ-Արխ գիւղում կողոպտել էր 8 տուն, որոնց թւում նոյն գիւղի բնակիչներ Բայրամ-Ալի Կուրբան-Ալի-օղլու և Մարդան-Ալի-օղլու տները։ Կալանաւորվածին ուղարկել են Բօրչալուի գաւառապետին։

◆ Երկամսեայ արձակուրդից վերադարձաւ և ստանձնեց իր պաշտօնավարութիւնը Թիֆլիսի ոստիկանապետ փոխ-գնդապետ Զասիպկինը։

◆ Թիֆլիսի ոստիկանապետը հետևեալ հրամանն է ուղղել ոստիկանութեանը. «Վերջին ժամանակներս նկատված է, որ այն դէպքերում, երբ գտնվում են դիակներ և անհրաժեշտութիւն է զգացվում, որպէսզի ոստիկանութիւնը քաղաքային բժիշկների միջոցով պարզէ մահվան պատճառը, այդ քանի պարզելը տևում է բաւականին երկար, և դիակները շոգ օրերին մի քանի օրերով մնալով տանը՝ սկսում են նեխվել ու, տարածելով վատ հոտ, դժգոհութեան առիթ են տալիս հարևաններին։ Ուստի առաջարկում եմ իմ իրաւասութեան ներքոյ գտնվող ոստիկանական պաշտօնեաներին ամեն միջոց ձեռք առնել, կարելւոյն չափ, շուտով, յամենայն դէպս մի օրից ոչ ուշ, պարզելու այդպիսի դէպքերում մահվան պատճառները, որպէսզի խոլերայով մեռածների դիակները հողին յանձնվեն ոչ ուշ մի օրից, ինչպէս այդ պահանջում է խոլերայի դէմ կռւելու համար սահմանված Բարձրագոյն կանոնների 22-րդ յօդուածը»։

◆ Ժողովրդական լուսաւորութեան մինիստրը թոյլատրել է Թիֆլիսի կանանց բարձրագոյն կուրսերի պատմական և բնագիտական բաժանմունքներում աւելացնել ազատ տեղերի թիւը։ Դրա հիման վրա մտնել ցանկացողների խնդիրքների ընդունելութիւնը կը շարունակվի մինչև սեպտեմբերի 1-ը։

◆ Կուր գետի վրա քաղաքային հասարակական լողարանների կառուցման աշխատանքները առայժմ ընդհատված են. պատճառն այն է, որ քաղաքային վարչութիւնը կապալառուին չէ վճարել հասանելիք գումարը։

◆ Պուշկինեան փողոցի վրա գտնվող ռուսաց հոգևոր սեմինարիայի երկյարկանի տունը 12 տարով կապալով տալու կրկնաճուրդը նշանակված է հոկտեմբերի 2-ին։

◆ Օգոստոսի 17-ին քաղաքային առևտրա-տնտեսական ոստիկանութիւնը սանիտարական դիտողութեան ենթարկեց քաղաքի բոլոր մսի խանութները։ Այդ դիտողութեան շնորհիւ նա համոզվեց, որ միսը նշանակված սակագնից աւելի չէ վաճառվում։

◆ Թիֆլիսի էլեքտրաքարշի ընկերութիւնը օգոստոսի 17 ից ձեռնարկել է Աւճալեան ձիաքարշի գծը էլեքտրաքարշի համար վերաշինելու աշխատանքները։

◆ Օգոստոսի լոյս 18-ի գիշերը կալանաւորվել է «Тифлисск. Копѣйка» լրագրի աշխատակից Իվան Խանդամովը։

◆ Թիֆլիսի պօստ հեռագրական շրջանի կառավարիչը տեղեկացրել է Թիֆլիսի նահանգապետին, որ պօստային երթևեկութիւնը Թիֆլիսից Թիոնէթ, Թիֆլիս-Թիոնէթեան խճուղիով, վերացվում է օգոստոսի 23-ից, իսկ դրա փոխարէն սահմանվում է երթևեկութիւն Թէլաւի և Թիոնէթի միջև՝ Թէլաւ-Թիոնէթեան խճուղիով։ Այդ հիման վրա պօստը Թիֆլիսից Թիոնէթ ուղարկվելու է այսուհետև Թէլաւի վրայով, շաբաթական երկու անգամ՝ երկուշաբթի և ուրբաթ օրերը, առաւօտեան ժամը 6 և 30 րոպէին։ Թէլաւից պօստը ուղարկվելու է Թիֆլիս երեքշաբթի և շաբաթ օրերը՝ առաւօտեան ժամը 7-ին։

◆ Մեզ հաղորդում են, որ Բօրչալուի գաւառի Սադախլօ գիւղից սկսած դէպի Ղազախի գաւառի սահմանը՝ Սընըղ-Քեօրփի (կոտրված կամուրջ) կոչված տեղերը օգոստոսի 14-ին ենթարկվել են սաստիկ կարկուտի։ Կարկտահարութեան աղէտի զոհ են գնացել Սադախլօյի բոլոր խաղողի այգիներն ու բամբակի ցանքերը։ Մոտակայքում կարկտի պատճառած վնասները համեմատաբար թեթև են։ Գիւղացիների կրած վնասը կարկտից չափազանց խոշոր է։

◆ Մեզ հաղորդում են, որ Շուշու թեմական դպրոցի համար տեսչի պաշտօնով հրաւիրված է բժ. Ն. Եարամիշեանը, որը և տուել է իր համաձայնութիւնն ու հաստատվել Վեհ. Կաթողիկոսի կողմից 3 տարվայ ժամանակով։ Նորընտիր տեսուչը ուսուցչական խումբ կազմելուց ի նկատի ունի հրաւիրել նաև արձակված նախկին խմբի ուսուցիչներից արժանաւորագոյններին։

◆ Բագուեցի Օրուջ Օրուջեվը դիմել է Բագուի քաղաքապետին՝ խնդրելով թոյլ տալ իրան հրատարակելու Բագւում Թուրքերէն լեզուով մի թերթ «Ենի Հակիկաթ» (Նոր Ճշմարտութիւն) անունով։ Թերթը լոյս է տեսնելու շաբաթական երեք անգամ։ Նոյնպիսի դիմում արել է նաև բագուեցի Ալի-Աբաս Թաղի-զադէն՝ խնդրելով թոյլատրել հրատարակելու Թուրքերէն լեզուով գրական-հասարակական-քաղաքական ամենօրեայ մի թերթ «Մէշել» (Ջահ) անունով։

◆ Լագոդաղից մեզ գրում են, որ այնտեղ եղանակները մի քիչ զովացել են։ Չը նայած այն հանգամանքին, որ այդ աւանում և շրջակայքում յունիս և յուլիս ամիսների ընթացքում չը տեսնուած շոգեր են եղել, բայց և այնպէս հիւանդանալու դէպքեր տեղի չեն ունեցել։ Խոլերան մուտք չէ գործել այդ շրջանը։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

—

Արշակ Կոստանեանի կօնցերտը

Օգոստոսի 18-ին Թիֆլիսի Արտիստական ընկերութեան ամառային թատրոնում տեղի ունեցաւ օպերային երգիչ Արշակ Կոստանեանի կօնցերտը մասնակցութեամբ իտալական երգիչ Ե. Բրօջիի։

Կօնցերտը, չը նայելով սաստիկ քամուն, գրաւել էր բաւական մեծ բազմութիւն դէպի կօնցերտային դահլիճը։

Ծրագիրը կազմված էր օպերային և ռոմանսային կտորներից։

Օպերային կտորները վերցված էին «Պայեացներ» և «Մարգարիտ որոնողներ» օպերաներից։

Կօնցերտը սկսվեց «Պայեացներ» օպերայի կտորներից։ Ներդաշնակուած էր ամբողջ օրկեստրը Պրեսմանի ղեկավարութեամբ։

Օպերայի ներածութիւնը երգեց Բրօջին ճաշակով և գեղեցիկ, արժանանալով հանդիսականների ծափահարութեան։

Այնուհետև հանդէս եկաւ Կոստանեան «Ծիծաղիր, միմոս» նշանաւոր դրամատիկական երգով, որը նա կատարեց մեծ զգացմունքով և հմտութեամբ։ Կոստանեան պահպանել է նախկին թարմութեամբ իր գեղեցիկ, մաքուր, ախորժալուր ձայնը, արտասանում է արտայայտիչ կերպով, կազմելով երաժշտական իմաստալից պարբերութիւններ։ Պէտք է նկատել, որ օրկեստրը տեղ-տեղ չափազանց դանդաղեցնում էր տեմպը և ստիպում երգչին ձգձգելու նախադասութիւնները։

Շատ աջող անցաւ երկու երգիչների միասին կատարած երկու դուէտները, որոնցից մէկը Բիզէի «Մարգարիտ որոնողներ» օպերայից էր, միւսը «Կրուցիֆիքս» Վիկտոր Հիւգոյի խօսքերով։

Կոստանեան առանձին երգեց Չայկովսկիի «Подвигъ», իտալական «Պենսա», հայերէն «Կռունկ», «Մի լար, բլբուլ» և ուրիշ երգեր։

Կոստանեանի երգը գրաւում է հանդիսականներին թէ երգչի գեղեցիկ ձայնի շնորհիւ և թէ այն հետաքրքրութեան, որ նա աշխատում է շարժել գեղարուեստօրէն խելացի արտայայտելով երգի իմաստը։

«Կռունկը» իր բնորոշ ձևակերպութեամբ, իր նուրբ կատարումով, իր զգացված արտայայտութեամբ մեծ հաճոյք պատճառեց հանդիսականներին։

Հանդիսականները ոգևորված ծափահարութիւններով յայտնեցին Կոստանեանին իրանց շնորհակալութիւնը։ Միրոզ

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

—

Биржевой Ежемѣсячникъ, 1910 г., С.-Петербургъ, Сергіевская 59.

Ամսագիրը լոյս է տեսնում Պետերբուրգում ներկայ տարվանից։

Նրա նպատակն է տալ տեղեկութիւններ բորսային գործերի, կրեդիտային հիմնարկութիւնների և առևտրի վիճակի մասին։

Մեզ ուղարկված է իբրև նմուշ յունիս ամսի համարը (№ 6)։

Տետրը բաղկացած է 72 երեսից և պարունակում է յօդուածներ, նկատողութիւններ և տեղեկութիւններ ֆինանսական զանազան ճիւղերի վերաբերեալ։

«Բորսա» յօդուածում պատմված է բորսաների հիմնարկութիւնը Ռուսաստանում և առանձնապէս նկարագրված է Պետերբուրգի բորսայի վիճակը։ Կան յօդուածներ նաւթի և ուրիշ մթերքների արդիւնաբերութեան և առևտրի մասին։ Յատուկ տեղ է տրված լոյս տեսած տնտեսական գրքերի քննութեան։

Հրատարակութիւնը ըստ երևոյթին չունի գիտնական, այլ միայն գործնական նպատակներ։ Խոշոր տեղ է տրված բորսային գներին, արժեթղթերի սակագներին և կարող է հետաքրքրական լինել գրասենեակների համար։ Ա. Ք.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Բէնդեր-Գեազ, 12 օգոստոսի

«Մշակի» № 172-ում բժ. Ա. Շեխեանի կողմից գրված նամակին ստիպված եմ հետևեալ կարճ բացատրութիւնը տալ։

Նախ, հայկական կօմիտէի ընտրութիւնը այնքան երկարաձգվից, որ ստիպված եղայ ընտրված և ամենահաւանական ընտրելի անդամների անունները տալ կօնգրէսի քարտուղարութեան, որպէսզի հրատարակվելիք նախնական հաղորդակցութիւնների մէջ մուտ գտնէ, հակառակ պարագայում հայկական կօմիտէի կազմված լինելը չէր ծանուցվելու։ Այս սխալը յետոյ դարմանեցի կօմիտէի իսկական հինգ անդամների ցուցակը յղելով քարտուղարութեան, որպէսզի կօնգրէսի ապագայում տպագրվելիք հատորների մէջ ուղղվի այդ սխալը։

Գալով կօնգրէսում իմ ներկայ չը գտնվելու պարագային, պէտք է յայտնեմ, որ կօնգրէսի բացումից 15 օր առաջ պատրաստութիւն էի տեսնում վաղօրօք Պարիզ հասնելու և այդ առիթով կանխաւ ուղարկեցի կօնգրէսի ճամբորդների ագէնտին (Lubin, Bd. Haussmann 36) իմ 6 օրվայ պանդոկի և ճաշերի արժէքը՝ 87 Ֆր. 50 սանտիմ։ Այս պարագան Շեխեան կարող է ստուգել յիշեալ ագէնտին դիմելով։ Ճիշդ այդ միջոցներին պարսից կառավարութիւնից սանիտարական հեռագիր եմ ստանում, որ անմիջապէս մեկնեմ Բէնդեր-Գեազ, այնտեղ հաստատելու կարանտին Ռուսաստանից եկած նաւերի և ճամբորդների համար, Պարսկաստանի այդ շրջանները խոլերայից պաշտպանելու համար։ Եւ որովհետև այնտեղ փոխանորդ չունէի և մօտ քաղաքները տրամադրելի բժիշկ չը կար, ստիպված եղայ իսկոյն ճանապարհվել Պարսկաստան, աւելի նուիրական պարտականութիւնս կատարելու համար։

Բայց որպէսզի հայկական կօմիտէն կօնգրէսում առանց ներկայացուցչի չը մնար, ես, իբրև նոյն կօմիտէի կողմից ընտրված պատգամաւոր, իմ կողմից փոխանորդ կարգեցի Ժընևի համալսարանի մանկավարժական բաժնի նախկին ուսանող Արամ Մամիկոնեանին, հայկական կօմիտէի նախապէս ուղարկված դեկուցումը կարդալու համար։ Այս անակնկալ բացակայութիւնս ժամանակին յայտնել էի ինձ ընտրող կօմիտէին, բժշկ. Աղասարեանցի միջոցով։

Ես սրտովին աշխատեցի, որ հայութիւնը պաշտօնապէս, նոյն իսկ եթէ կարելի է, հայկական սեկցիայով մասնակցի կօնգրէսին, բայց իմ այդ յոյսը չիրականացաւ՝ մեր սովորական դարձած անտարբերութեան պատճառով։

Արդեօք այդ ցանկութիւնը 1913 թւի կօնգրէսի համար կիրականանայ, մաղթենք...։

Դոկտ. Կ. Փաշայեան

—

Թիֆլիս, 14 օգոստոսի

«Մշակի» № 155-ի գաւառական տեղեկութիւնների բաժնում Յ. Անեանը տալիս է մի տեղեկութիւն Զաքաթալայի կեանքից։ Լրատուն նախ սկսել է ջրի մատակարարումից և վերջացրել իր խօսքը քահանայով ու վարժապետներով։ Ըստ լրատուի յայտարարութեան, բացի այդ անձնաւորութիւններից «ոչ ոք չը կայ գրող, իսկ դրանց գլուխներումն էլ գրելու բան չէ մնացել, որովհետև մէկը զբաղված է նշանագրութեամբ (Եա), միւսը դարձել է փողին ստրուկ իր ամբողջ հոգով, իսկ քահանան զբաղված է թղթախաղութեամբ» (?!)։

Ցանկալի էր, որ թղթակիցը նախ լաւ ճանաչէր իր շրջապատողներին և ապա գրիչ ձեռք առնէր նրանց մասին մի բան գրելու։

Յիշեալ թղթակիցն իր հաղորդած այդ տեղեկութեան մէջ առհասարակ առաջնորդվել է գաւառական քաղաքին յատուկ բամբասանքներով, և ասածները միտումնաւոր զրպարտութիւն են իմ վերաբերմամբ։

Մարդկանց անունը արատաւորելու համար միջոցների մէջ ոչ մի խտրութիւն չը դնել՝ այդ աւելի քան տգեղ բան է։

Եղէք աւելի շիտակ և այդ ձեզ պատիւ կը բերի։ Գ. Ադամեան

—

Բաթում, 17 օգոստոսի

«Մշակի» էջերում Բաթումից «անյայտ» լրատուներ, մանաւանդ վերջերս, յաճախակի բացասական տեղեկութիւններ են տալիս մեր խնամքին յանձնված դպրոցի և նրա ղեկավար մարմինների մասին։ Հոգաբարձութիւնս այդ բոլորը համարելով խրծբրծանք և ժամանաւոր անհատների վրէժառութիւն՝ միշտ էլ իր արհամարհանքին է արժանացրել այդ երևոյթը։

«Մշակի» № 176-ում ** ստորագրութեան տակ թագնվող լրատուն երկրորդ անգամն է, որ հոգաբարձութեանս վերագրում է այնպիսի մի բարբարոսական ակտ, ինչպիսին է՝ «դպրոցի ընկած պատկերը արձանագրված է եղել հոգաբարձական և ուսուցչական խառն ժողովների թղթերում և արձանագրութիւններում և այս ամենը թուրքի փաշային յատուկ կամայականութեամբ պատառ պատառ է արել թաչֆայական հոգաբարձուն», որ իբր թէ աւագ ուսուցչի անկարութեան մասին ուսուցիչների (կաւելացնենք մենք—թէկուզ մի ուսուցչի) կողմից բերանացի և գրաւոր հարցապնդումն է եղել և մեր կողմից անուշադրութեան է մատնվել։ Թէև **-ի բոլոր զրպարտութիւնները և մի առ մի պատասխանել բոլորին՝ պատիւ չի բերի ոչ մի անհատի, մանաւանդ հոգաբարձական մարմնի։

Սակայն խորը գիտակցելով, որ ընդհանրապէս մեր դպրոցների գոյութիւնը նիւթականի չգոյութեան պատճառով կախված է հասարակութեան բարի տրամադրութիւնից և որ վերոյիշեալ յերիւրանքները կարող են շատ միամիտների մոտք պղտորել, հոգաբարձութիւնս առաջարկում է ** լրատուին հրապարակով վերցնել իր դիմակը, որպէսզի հնարաւորութիւն ունենանք հէնց իր ակնարկած «հասարակութեան կարող անձերից ընտրված յանձնաժողովի» («Մշակ» № 176) առաջ ապացուցանելու, որ ինքը պրօվօկատորի դեր է կատարում դպրոցի նման մի վեհ և պատկառելի հիմնարկութեան վերաբերմամբ։ Եթէ **-ը մեր այս առաջարկը չի ընդունի և նորից գլուխը կը թաղի ձիւնի մէջ, այդ դէպքում նա ինքը ապացուցած կը լինի այն, ինչ որ մենք պիտի ապացուցենք։ Եթէ կը շարունակի ծածկված մնալ, նա կարժանանայ նորից մեր, ինչպէս և ամեն մի շիտակ և գիտակից ընթերցողի խորին արհամարհանքին։

Բաթումի հայոց եկեղ.-ծխական երկսեռ դպրոցի հոգաբարձութեան նախագահ՝

Գ. Գրիգորեանց

Անդամներ՝ Մ. Իգիթխանեան
Ա. Մնոյեան

Անդամ քարտուղար՝ Յով. Բալայեան

—

Երևան, 12 օգոստոսի

Զարմանքով կարդացի «Մշակի» № 174 ում իմ հասցէին ուղղված մի քանի զրպարտութիւններ՝ «Ժողովուրդ» ստորագրութեամբ, իբր թէ ամսական 6—7 անգամ եմ գնում եկեղեցի, այն էլ ժամերգութեան կիսին և յաճախ «կոնծած», մէյդան եմ գնում ամեն առաւօտ փայտս ձեռքիս և ինչ-որ կարգադրութիւններ եմ անում մրգավաճառներին և այլն և այլն։

Ակամայից ընթերցողի մէջ հարց է ծագում, թէ ինչն է ստիպել այդ «Ժողովուրդ» պարոնին վեր կենալ առանց փաստերի հրապարակով անուանարկել մի հայ քահանայի։

Պահանջում եմ այդ պարոնից իր իսկական ստորագրութեամբ և փաստերով ապացուցել վերոյիշեալ զրպարտութիւնները. հակառակ դէպքում կը պահանջեմ իր զրպարտութիւնների համար բացատրութիւն տալ մարմնաւոր դատարանի առաջ։

Սպասում եմ։

Երևանի ս. Պօղոս-Պետրոս եկ. միաբան՝

Սիմէօն ք. Բաբայեան

ՇՈՒՇՈՒ ԹԵՄԱԿԱՆ ԴՊՐՈՑԸ

Այս վերնագրով «Մշակի» 161-դ և 162-դ համարներում Շուշուց մի ընդարձակ թղթակցութիւն կար տպագրված, որի մէջ առաջ էր բերված նաև թեմական դպրոցի եռանձնեայ սիրագործ հոգաբարձութեան 10 կէտից բաղկացած մեղադրական ակտը, երբ թէ որի հիմամբ «ազատ է կացուցված» ուսուցչական ամբողջ խումբը։ Նախ քան երեք հոգաբարձուների անճշդութիւններից և կեղծ ու պատիր «փաստերից» յերիւրած կէտերին անցնելը՝ արձանագրենք այստեղ, որ նրանք այդ մեղադրականը կազմել են ոչ թէ յունիսի 30-ի պատմական օրը, երբ իրանց արձակման վճիռն են արել, այլ սարքել են շատ ուշ, Վեհափառ Հայրապետի դիւանապետի այն հեռագրից յետոյ, որով Վեհի հրամանով պահանջվում էր ուսուցչական խումբն արձակելու վերաբերմամբ արած իրանց օրագրական արձանագրութիւնը, երեքօրեայ տաժանակիր և քրտնաջան աշխատանքից յետոյ, մասնակցութեամբ և «բարի խորհուրդներով» այն մի երկու ուսուցիչների, որոնց մասին տեսուչը փոքր-ինչ աննպաստ կարծիք է յայտնած եղել։ Ինչպէս ընթերցողներին յայտնի է առաջուց, եռանձնեայ հոգաբարձութիւնն իր արձակման վճիռը տուել է այն օրագրական արձանագրութեան հիման վրա, որն արդէն հրատարակված է «Մշակ» և «Հորիզոն» օրաթերթերում։ Այդ 10 կէտը խմբագրել են նրանք իրանց անարգ արարքը յետին թւով հիմնաւորելու և հոգևոր բարձր իշխանութեան առաջ արդարանալու նպատակով։ Արձանագրենք նոյնպէս, որ պատուարժան հոգաբարձութիւնը, հակառակ տեսչի պահանջների, զլացաւ տալ նրան այդ մեղադրանքի կէտերը և այդպիսով նրան հնարաւորութիւնից զրկեց միաժամանակ իր բացատրութիւնները տալու հոգևոր վերագոյն ատեանին, մինչ եղեռնագործին և կախաղանի արժանի ոճրագործին էլ յայտնում են իր յանցանքը, բացատրութիւնը լսում, ապա միայն դատապարտում։ Այլև արձանագրենք այստեղ, որ իր տեսչի հետ այդպէս վարվող հոգաբարձութիւնը իր խորհրդարանի դռները լայն բացել ու իր արձանագրութիւնների մատեանների հետ տեսչի տեղեկագիրը սիրայօժար կերպով կողմնակի անձանց ու յօդուածագիր պարոնի առաջ էր դրել այն ժամանակ, երբ այդ միևնոյն հոգաբարձութիւնը չը բարեհաճեց նոյն իսկ մի օրով յետ տալու տեսչին իր իսկ կազմած տեղեկագիրը՝ պատճէնը վերցնելու համար։

Այժմ դառնանք «հոգաբարձութեան», ըստ յօդուածագիր պարոնի «լուրջ և յարգելի պատճառաբանութիւն» կազմող մեղադրական 10 կէտերին։

1) Դպրոցը աննշան առաջադիմութիւն է ունեցել, որովհետև ուսուցիչների մէջ խռովութիւն և երկպառակութիւն է եղել, ուսուցիչները միմեանց դէմ կռւելիս են եղել և որ մանկավարժական ժողովներում մանկավարժական ոչ մի խնդիր չէ արծարծվել։ «Աննշան առաջադիմութիւնը»՝ ցոյց տալու համար պատուարժան հոգաբարձութիւնը «բարեխղճօրէն» առաջ է բերում միայն թոյլ դասարանների փոխադրող աշակերտների թիւը, առանց յիշելու սակայն վերաքննելիների թիւը և թէ յատկապէս քանի՞ առարկայից են վերաքննելի, ինչպէս և առանց թուլութեան պատճառների մէջ մտնելու, որ տուել է տեսուչը։ Այս խնդրի նկատմամբ ընթերցողին ճշգրիտ գաղափար տալու համար անհրաժեշտ ենք համարում այստեղ առաջ բերել ամբողջ դպրոցի առաջադիմութեան ընդհանուր պատկերը։

Մինչև տարվայ վերջը դպրոցն ունեցել է 301 աշակերտ, սրանցից առանց այլ և այլութեան փոխադրվել են 115 հոգի, վերաքննելի են՝ 94, մնացել են՝ 62 և մնացել ու արձակվել իբրև Բ. տարվայ աշակերտներ՝ 30 հոգի։ 94 վերաքննելիներից 30-ը պատրաստականների աշակերտներ են, վերաքննելի միմիայն մի առարկայից. այստեղ մի հատիկ 3— ունեցող աշակերտ անգամ վերաքննութիւն է ստացել. պարզ է, որ այդ բոլոր 30 հոգին էլ կանցնեն յաջորդ դասարանները։ Մնացած 64-ը բուն դպրանոցական բաժնի աշակերտներն են, վերաքննելի մէկ կամ երկու առարկայից. մի քանիսն էլ աշխատանքներ ունեն։ Ակնյայտնի է, որ սրանց մեծագոյն մասն էլ կը փոխադրվի, հետևաբար փոխադրված կը լինեն ոչ թէ 115, այլ շուրջ 200 հոգի, ամբողջ աշակերտութեան $^{2}/_{3}$ մասը. այսպիսի պատկեր տուող դպրոցը, կարծում եմ, առաջադիմութեան կողմից «աննշան» չը պիտի կոչվի, մանաւանդ եթէ ի նկատի ունենանք, որ մի դպրոցի առաջադիմութիւնն ու ուսուցիչների ցոյց տուած արդիւնքը երբեք փոխադրվածների թւով չափել չէ կարելի։ Այս նկատմամբ տեսուչ կամ ուսուցչ. խումբ ո՛չ թէ պարսաւանքի, ապա մեծ շնորհակալութեան են արժանի, որ ցանկացել են, որքան կարելի է պատրաստ և ուժեղ դասարաններ կազմել, ամենայն խստութեամբ վերաբերվելով դէպի փոխադրվող աշակերտները և ոչ թէ առաջադիմութեան մեծ տոկոս ցոյց տալու նպատակով զիջողաբար վարվելով. չէ՞ որ նրանցից էր կախված բոլոր աշակերտներին էլ փոխադրելու գործը։ Եւ զարմանալին այն է, որ մինչդեռ անցեալ տարի մեր այս ընթացքի համար շնորհակալութեան ենք արժանացել, այս տարի մեր յանուն դպրոցի վարկի և առաջադիմութեան խստութեամբ վարվելը արձակման արժանի հանգամանք է նկատվում իմ «մանկավարժ» հոգաբարձուների կողմից։ Եւ եթէ այնուամենայնիւ առաջադիմութիւնն «աննշան» էք համարում, մեծ. տեարք, ապա դրա պատճառը մի որոնէք ինչ-որ «խռովութիւնների» ու «կռիւների» տակ, որ իբր թէ տեղի են ունեցել ուսուցիչների մէջ, այլ փոքր ինչ բարեխղճութիւն ունեցէք իսկական պատճառները մատնանշելու։ Յիշեցէք, յարգելիներ, թէ ձեր և առհասարակ բոլոր դպրոցների աշակերտութիւնը ինչ շրջաններ է անցկացրել, յիշեցէք ժամանակի ոգին, շրջապատող հանգամանքները, ձեր աշակերտների ընտանեկան պայմանները, յիշեցէք թէ մտաւոր-կրթական ինչ մակարդակ ունեցող աշակերտութիւն էք տուել մեզ, ապա միայն քաջութիւն ունեցէք պահանջներ դնելու։ Համարձակ կերպով պնդում եմ, որ ո՛չ մտաւոր-բարոյականի և ո՛չ կարգապահութեան կողմից ձեր դպրոցը իր միւս քոյր դպրոցներից յետ չէ։ Ինչո՞ւ այնպիսի պատճառաբանութիւն չէք բերում, որին ինքներդ հաւատ ընծայէիք. չէ՞ որ թէ ես և թէ մանկ. ժողովը պահանջել ենք ձեզանից ցոյց տալ խռովարարին, որպէսզի ես նրան «չներին կապէի ու բաց թողնէի», և դուք էք ասել հոգ. պաշտօնական ժողովում, որ «ասէ-կօսէներին» չէք հաւատում, ոչ ոքի վրա չէք կասկածում։ Ես չեմ ուրանում սակայն, որ դպրոցում աղմուկներ եղել են. աղմկել ու բողոքել են աշակերտները մի ուսուցչի դէմ, որին դուք էք զօրով, ձեր խնամակալական կապերի շնորհիւ, դպրոց մտցրել՝ ամեն արդարութիւն ոտնատակ տալով և գիտակցաբար աղմուկների դուռը բանալով. այս հանգամանքը ձեր խղճի վրա ծանրացած կը մնայ, պ. պ. հոգաբարձուներ։ Ազնւութիւն ունեցէք խոստովանելու, որ եթէ այդ ուսուցինը չը լինէր, այս տարին էլ ամենայն խաղաղութեամբ կը բոլորէինք։

Առանց խղճի խայթ զգալու գրում էք նաև, որ մանկավ. ժողովը ոչ մի մանկավ. խնդրով չէ զբաղվել։ Եթէ դուք մանկավ. խնդիր չէք համարում նոր աշակերտների ընդունելութեան և վերաքննելիների փոխադրութեանց խնդիրները, դասագրքերի ընտրութիւնը, դաստիարակչական գործի կազմակերպութիւնը, աշակերտների երկամսեայ առաջադիմութեանց և վարքի խնդիրները, նրանց ընթերցանութիւնը կանոնաւորելու, մեծերի համար էլ սեմինարիաներ կազմակերպելու գործը, դպրոցական հանդէսները, դպրոցի վերջնական ծրագրի մշակութիւնը և այլն, ապա յիրաւի մանկավ. ժողովը ոչ մի մանկավարժական խնդրով չէ զբաղվել։

Աւետիք Տէր-Պօղոսեան

Էջմիածին, 8 օգոստոսի

(Որ շարունակվի)

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՇՎԷՅՑԱՐԻԱՅԻՑ*)

II

Ինչպէս անցեալ անգամ ասացի, մեր Կովկասեան Հայոց Բար. Ընկերութիւնը մեծ գործ ունի անելու գիւղերում։ Նա միանգամայն զեմստվօյի դերը կարող է կատարել այնտեղ, խմբելով իր շուրջը գիւղացիներին։

Իսկապէս, ինչու մենք միշտ հեռու ենք պահում ժողովրդին, և սա, յոյսը դնելով «ազգի» վրա, ինքը ոչինչ չէ ուզում անել և տարէ-ցտարի աղքատանում է։ Քանի քանի անգամ մեր ընկերութեան գրասենեակի շեմքում կանգնել են երիտասարդ և առողջ տղամարդիկ և լրբօրէն պահանջել են «ազգի փողերը», իսկ երբ մերժում են տացել՝ հայհոյանքով և սպառնալիքով են հեռացել։ Բայց ո՞վ է մեղաւորը։ Մենք ենք նրանց այդպէս սովորեցրել, մենք ենք սպանել նրանց մէջ մարդկային արժանապատուութեան զգացմունքը։ Այստեղ ակամայից յիշում եմ մի դէպք, որ պատմել է ինձ իմ ծանօթ տիկիններից մէկը։ Անցնում է նա Բերլինի փողոցով և նկատում է մայթի վրա նստած մի կոյր, անդամալոյծ մարդու, որի առաջ դրված է լինում փոքրիկ արկղ՝ լի լուցկիներով և ծխախոտներով։ Տիկինը խղճահարվում է այդ դժբաղդին և գրպանից հանելով մանր փող դնում է նրա ձեռքը և շարունակում իր ճանապարհը։

— Է՛հ, տիկին, դուք մոռացաք վերցնել ձեր լուցկիները,—բղաւում է ետևից մարդը։

— Ո՛չ, ինձ լուցկիներ հարկաւոր չեն,—պատասխանում է տիկինը առանց կանգնելու։

— Ի՞նչպէս,—բարկանում է մարդը.—Ի՞նչ իրաւունքով դուք վիրաւորում էք ինձ. միթէ ես մուրացկան եմ, որ ինձ ողորմութիւն էք անում։ Եթէ ձեզ լուցկիներ հարկաւոր չեն, խնդրեմ յետ վերցրէք ձեր փողը։

Խեղճ տիկինը շփոթված վերադառնում է և ներողութիւն խնդրելով մարդուց վերցնում է լուցկիները։

Որքա՜ն հեռու ենք մենք այդ բանից... Չունևոր բանւորին գործիքներ տալ, մի ուրիշի համար պատրաստելու նիւթեր մատակարարել, մի երրորդին պաշտօն գտնել և այլն... ահա բարեգործելու ամենագեղեցիկ ձևերը, բայց միշտ էլ պայման պէտք է դնել՝ որ ստացածը նրանք կամաց-կամաց վերադարձնեն։ Անթիւ օրինակների վրա հիմնվելով, ես վստահանում եմ ասել, որ ձրի ստացած բանը ոչ միայն թէ օգուտ չէ բերում ժողովրդին, այլ և արժէք չունի նրա աչքում, մինչդեռ իմ ասած ձևի օգնութիւնը կը զարգացնի նրա մէջ աշխատասիրութիւն և տոկունութիւն։ Ի հարկէ, մեծ աղէտների ժամանակ և բացառիկ դէպքերում անհրաժեշտ է լինում օգնել նրանց վերադարձի, բայց խօսքս ընդհանուրի մասին է։

Գալով գիւղերին, նորից կրկնում եմ, որ Կ. Հ. Բ. Ընկ. շատ բան կարող է անել այնտեղ։ Այժմ նա գիւղական դպրոցներին նպաստ է տալիս, բայց դրանով գործը առաջ չէ գնում, որովհետև հազիւ կարդալ սովորելով և ապա ոչ մի գրքի կամ լրագրի երես չը տեսնելով՝ գիւղացին մոռանում է իր սովորածը և այդպիսով թէ Ընկերութեան ջանքերն ապարդիւն են լինում և թէ գիւղացու աչքում ուսումնարանի նշանակութիւնը նսեմանում է։

Իմ կարծիքով՝ Ընկերութիւնը պէտք է լաւ ծանօթանայ գիւղացու կեանքի և նրա բոլոր կարիքների հետ։ Նա միջնորդ պիտի հանդիսանայ կառավարութեան և գիւղացու միջև և պաշտպանի վերջինիս շահերը։ Նա պէտք է ցոյց տայ գիւղացուն աշխատելու նոր աղբիւրներ, մատակարարէ նրա համար էժան գնով գործիքներ, շուկայ ստեղծի նրա արդիւնաբերութեան համար և ազատի նրան չարչիների ու վաշխառուների ձեռքից։ Օրինակի համար, ի՜նչ գեղեցիկ բան կը լինէր, եթէ Ընկերութիւնը շինէր մեծ շտեմարաններ և առնէր գիւղացուց շուկայի գնով ցորենը, որպէսզի սա կարիքից դրդված՝ ստիպված չը լինի կէս և քառորդ գնով ծախել իր պաշարը և ապա քաղցած նստել։ Ունենալով կենտրոնական վարչութիւն և մի ամբողջ ցանց գաւառական ճիւղերի, դժուար չէ իրագործել այս ամենը, իսկ ծախսն էլ չը պէտք է մեզ վախեցնի, որովհետև մենք համոզված պէտք է լինենք, որ, տեսնելով իր օգուտը, գիւղացին ուրախութեամբ կը մասնակցի գործին՝ անդամ գրվելով Ընկերութեանը։ Այդպիսով ժամանակի ընթացքում Կ. Հ. Բ. Ընկերութիւնը կը դառնայ ինքնօգնութեան ընկերութիւն, որին և պէտք է ձգտի մեզանից ամենից մէկը, ով որ հասկանում է ժողովրդի իսկական օգուտը։ Բարձրացնելով գիւղացու կուլտուրան, չէ՞ որ մենք դրանով կը բարձրացնենք և նրա արդիւնաբերութիւնը և նա միջոց կունենայ պահելու ոչ թէ միայն մի դպրոց, այլ և գրադարան, հիւանդանոց, դեղատուն և շատ ուրիշ օգտակար հիմնարկութիւններ։ Իշխ. Մ. Թումանեան

Leysin, 22/9 օգոստոսի

---

*) Տես «Մշակ» № 169.

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

Էնզէլի, 14 օգոստոսի

Հեռագրական, լրագրական և վերջապէս եկողների պատմած լուրերը հաստատում են պարսից զինուորական մինիստրի և իր կողմնակիցների յանցաւոր գործողութիւնը Աթաբէկի ծառաստանի պարկի մէջ։

Նրանց գործողութիւնը յեղափոխականի, սահմանադրականի չէր այնտեղ, և դրանով նրանք սևացրին Պարսկաստանի «սահմանադրական» անունը։

Զինուորական մինիստրը իր կողմնակիցների հետ միասին մի անորակելի ոճիր գործեց, եղբայրը եղբօր դէմ հանելով։

Երբ երկրի ամեն կողմից նորանոր խլրտումների, անհանգիստ շարժումների ձայն է լսվում, երբ ժողովրդին բարեկամներ են հարկաւոր դատը իմանալու և դարման անելու համար, ասում եմ՝ հէնց այդ փափուկ մոմենտին Թէհրանի անհեռատեսները թնդանօթով և գնդակացիրով ժողովրդի որդիներին են կոտորում զինաթափ անելու համար։ Միթէ այսպէս են վարձատրում անձնուրաց և հայրենիքին նուիրված հերոսներին։

Սաթթար-խանը, որ Թաւրիզում միմիայն վեց հոգով յեղափոխութիւն պահեց և մօտ երկու տարի պաշարված մնաց իր համոզմունքին առանց դաւաճանելու, այսօր գնդակահարվում է, որպէս հայրենիքի թշնամի։ Միթէ սա ծաղր չէ, միթէ սա ստորութիւն չէ։ Մարդիկ այնքան կուրացել են, որ առանց հաշիւ տալու յանցանքներ են վերագրում իրանց նման չը մտածողներին, չիմանալով որ ճշմարտութիւնը աւելի յաղթող կը հանդիսանայ ի վերջոյ։

«Գինու քացախը աւելի թունդ է լինում» —ասում է ժողովրդական առածը, և իսկապէս որ այդպէս է։ Երէկվայ յեղափոխականները այսօր չաղ պաշտօն ստանալուց յետոյ փառք վաստակելու համար աւելի թունդ միապետական են դարձել, քան իսկական միապետականը։ Մուջահիդ

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐ. ՀԵՌ. ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

18 օգոստոսի

ՕՐԵՕԼ։ Նահանգական զեմստվօն հիմնել է փորձնական դաշտեր Օրլօվի, Ելէցկի և Լէվինի գաւառներում։

ԽԱՐԿՕՎ։ Բէլգօրօդի և Խարկօվի միջև եղած հեղեղը ողողել է ճանապարհը 150 սաժէն տարածութեամբ։ Հաղորդակցութիւնը ընդհատված է. գնացքները կանգ են առել։

ՎԻԷՆՆԱ։ Բաղէնում յանկարծամահ է եղել Ցէտինիէի ռուսական միսսիայի քարտուղար Դեաչէնկօն։

ԽԱՐԿՕՎ։ Ուժեղ հեղեղը և կարկուտը ոչնչացրել է գաւառում բանջարանոցները, ցածր տեղերում գտնվող գիւղացիական տները ծածկվել էին ջրով։ Խեղդվել են 3 մարդ, ջուրը տարել է դիակները։

ԵԿԱՏԵՐԻՆՕԴԱՐ։ Զինուորա-շրջանային դատարանում սկսել է քննվել այն 9 անարխիստների գործը, որոնք մեղադրվում են 1906—7 թւականներին Տեմրիւկեան գաւառում կողոպուտներ կատարելու մէջ։ Կանչված են մօտ 30 վկաներ։

ԿԱԶԱՆ։ Զինուորա-շրջանային դատարանը քննում է Կազանի համալսարանում, հոգեկան հիւանդների հիւանդանոցում և Սամինինների խանութում 1906 և 1907 թւականներին կատարված կողոպտման գործը։ Մեղադրվում են 19 հոգի, որոնց մէջ է անամնաւոր Նիկօլայէվը։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Յ. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

(Ամառնային երթևեկութիւն)

(Ժամերը նշանակված են Թիֆլիսի ժամանակով)

ԹԻՖԼԻՍԻՑ ՄԵԿՆՈՒՄ Է

ԲԱԳՈՒ՝ մարդատար № 12 գնացքը՝ 2 ժ. 38 ր. ցերեկ., Գանձակ է հասնում 9 ժ. 9 ր. երեկ., Եւլախ՝ 11 ժ. 20 ր. գիշերվայ, Հաջի-Կաբուլ՝ 4 ժ. 16 ր. գիշ., Բալաջարի 8 ժ. 1 ր. առաւօտ., Բագու՝ 8 ժ. 48 ր. առաւ.։ Արագ № 2 գնացքը՝ 8 ժ. 15 ր. առաւ. Գանձակ է հասնում 1 ժ. 28 ր. ցեր., Եւլախ՝ 3 ժ. 6 ր. ցեր., Հաջի-Կաբուլ՝ 7 ժ. 15 ր. երեկ., Բալաջարի՝ 10 ժ. 8 ր. գիշ., Բագու՝ 10 ժ. 53 ր. գիշ.։ Պօստատար № 4 գնացքը՝ 10 ժ. 4 ր. գիշ., Գանձակ է հասնում 4 ժ. 18 ր. գիշ., Եւլախ՝ 6 ժ. 26 ր. առաւ., Հաջի-Կաբուլ՝ 11 ժ. 23 ր. առաւ., Բալաջարի՝ 3 ժ. 9 ր. ցեր., Բագու՝ 4 ժ. 45 ր. ցեր.։

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆ՝ պօստատար № $^{74}/_{75}$ 12 ժ. 22 ր. գիշ., Ալէքսանդրօպօլ է հասնում 11 ժ. 21 ր. առ., Էջմիածին կայար.՝ 4 ժ. 49 ր. ցեր., Նախիջևան՝ 10 ժ. 51 ր. գիշ.. Ջուլֆա՝ 12 ժ. 29 ր. գիշ.։ Ապրանքատար-մարդատար՝ 4 ժ. 15 ր. ցեր., Ալէքսանդրօպօլ է հասնում 3 ժ. 10 ր. գիշ., Էջմիածին՝ 8 ժ. 38 ր. առաւօտեան, Երեւան՝ 10 ժ. 9 ր. առ.. և այստեղից դէպի այլեւս չէ գնում։

ԲԱԹՈՒՄ՝ մարդատար № 5՝ 7 ժ. 31 ր՝ երեկ., Միխայլօվօ է հասնում 11 ժ. 45 ր. գիշ., Բաթում՝ 9 ժ. 30 ր. առաւ.։ Պօստատար № 3՝ 1 ժ. 24 ր. ցեր., Միխայլօվօ է հասնում 5 ժ. 47 ր. երեկ., Բաթում՝ 3 ժ. 25 ր. գիշ.։ Արագ № 1 գնացքը՝ 10 ժ. 36 ր. գիշ., Միխայլօվօ է հասնում 2 ժ. 39 ր. գիշ., Բաթում՝ 10 ժ. 49 ր. առաւօտեան։

ԲՈՐԺՈՄ՝ մարդատար № $^{7}/_{8}$ 8 ժ. 28 ր. առ. Միխայլօվօ է հասնում 12 ժ. 42 ր. ցեր., Բորժոմ՝ 2 ժ. 3 ր. ցեր.։ Մարդատար № $^{9}/_{10}$ 3 ժ. 36 ր. ցեր., Միխայլօվօ է հասնում 7 ժ. 56 ր. երեկ., Բորժոմ՝ 9 ժ. 13 ր. գիշերվայ։

ԹԻՖԼԻՍ Է ՀԱՍՆՈՒՄ

ԲԱԳՈՒԻՑ՝ պօստատար № 3՝ 12 ժ. 24 ր. ցեր.։ Արագ № 1 գնացքը՝ 10 ժ. 36 ր. գիշ.։ Մարդատար № 11՝ 6 ժ. 58 ր. առ. (այս գնացքը Բաթում չէ գնում)։

ԲԱԹՈՒՄԻՑ՝ արագ № 2 գնացքը՝ 7 ժ. 25 ր. առաւ.։ Պօստատար № 4՝ 9 ժ. 4 ր. երեկ.։ Մարդատար № 6՝ 11 ժ. 4 ր. առ. (այս գնացքը Բագու չէ գնում)։

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆԻՑ՝ պօստատար № $^{72}/_{73}$՝ 6 ժ. 8 ր. առաւ.։ Մարդատար-ապրանքատար՝ 6 ժ. 33 ր. երեկոյեան։

ԲՈՐԺՈՄԻՑ՝ մարդատար № $^{9}/_{10}$ 8 ժ. 8 ր. երեկ.։ Մարդատար № $^{7}/_{8}$ 6 ժ. 28 ր. առաւ.

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 Թ.
(Կուկիա, Վօրօնցօվի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
ԱՌԱՒՕՏԵՆԵՐԸ՝
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան և վեներական (սիֆիլիս) հ.։
Կ. Մ. ՉԻԿՈՎԱՆԻ—9$^{1}/_{2}$—11 ժ. աչքի, ներքին և նեարդային։
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.։
Ն. Տ. ՄՈՒԼԻՆ—10—12 ժ. ականջի, կոկորդի և քթի հիւ.։
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներակ., վիրաբուժութեան և միզասեռ. հ.
Ա. Մ. ՓՈՒՂԻՆՕՎ—12—1 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.։
ԿԻՆ-ԲԺԻՇԿ Պ. Ս. ՋԻԼԲԵՐՇԱՑ—12$^{1}/_{2}$—1$^{1}/_{2}$ ժ. մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.։
Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—1$^{1}/_{2}$ ժ. ներքին և երեխայոց հիւ.։
Բ. Գ. ԱՂԱՍԱՐԵԱՆ—1$^{1}/_{2}$—2 ժ. ներքին և երեխայոց հ.
ԵՐԵԿՈՆԵՐԸ՝
ԿԻՆ ԲԺԻՇԿ Պ. Ս. ՋԻԼԲԵՐՇԱՑ—6—6$^{1}/_{2}$ ժ. մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.։
Ի. Ֆ. ՄԱՐՑԻՇԵՎՍԿԻ—6—7 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.։
Վճարը 50 կ.։ Չքաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան
103. 0—87

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՍՂՆԱԽԻ հայոց եկեղեցական երկսեռ դպրոցի համար հարկաւոր է
ԱՒԱԳ-ՈՒՍՈՒՑԻՉ,
որը աւանդելու է հայոց լեզուի առարկաներից։ Տարեկան ռոճիկ 450 ր., բնակարան՝ 2 սենեակից, վառելիք, ջուր և ծառայ։ Դիմել մինչև օգոստոսի 25-ը Սղնախի Հոգաբարձութեանը, իսկ 25-ից յետոյ՝ Тифлисъ, Красногорскій пер., № 7, Արամ Յովհաննիսեանցին։
(ա. օ.) 956. 3—1

Լոյս տեսաւ եւ վաճառվում է
Ե. ՖՐԱՆԳԵԱՆԻ
ՆԻՑՇԷ ԵՒ ՆՐԱ ՓԻԼԻՍՕՓԱՅՈՒԹԻՒՆԸ
Նիցշէի պատկերով, 96 երես, գինը 20 կոպ. Բովանդակութիւն. ա) Գծեր Նիցշէի կեանքից. բ) Նրա փիլիսոփայութեան երեք շրջանները. գ) Բոլոր արժէքների վերագնահատումը. դ) Գերմարդ և նրա թէօրիան. ե) Յաւիտենական դարձը։
Գումարով գնողներին (հեղին.) 20% զեղչ։ Հեղինակի հասցէն՝ Эривань, Армянская Семинарія, Е. Франгяну.
(չ. ու.) 953. 2—2

Ներքին Թաղավարդ
գիւղի ծխակ. դպրոցի համար հարկաւոր է
ՄԻ ՎԱՐԺՈՒՀԻ
գլխաւորապէս ռուսաց լեզուի և ձեռագործի համար, շաբաթական 25 դասից ոչ աւելի։ Տրվում է 300 ր. ռոճիկ, բնակարան և վառելիք։ Հասցէն՝ Шуша, Баласану Гулієву, յանձնել Ն. Թաղվ. աւագ-ուսուցիչ Աւետիս Գասպարեանին։
(չ. ու.) 947. 2—2

ԴԱԴԵԱՆ ԱՄՈՒՍԻՆՆԵՐ
ԴԱՍԱԳ. ԲՆԱԳԻՏ. հ. ծխ. դպ. III բաժ.—55 կ.
» » IV բաժ.—50 կ.
ԸՆԴՀ. ՊԱՏՄ. » V բաժ.—45 կ.
Պահեստը «ԳՈՒՏԵՆԲԵՐԳ» խանութում։
Տիկ. Վ. ԴԱԴԵԱՆ. «Բարի է Սուրիկը», մանկ. պիէս 2 գործող. —15 կ.
Թիֆլիսի գրավաճառների մօտ։
(8,14,20,26) 887. 4—3

Ուղարկում եմ պօստով, վերադիր վճ. և առանց կանխավճարի «Տրիումֆ» չէվիօտի մի ամբողջ կտոր 4$^{1}/_{4}$ արշ., տղամարդկանց
ԶԳԵՍՏԻ ՀԱՄԱՐ 2 Ր. 75 Կ.
Չը նայած որ շատ էժան է, «ՏՐԻՈՒՄՖ» կտորը բրդից է (ոչ բամբակից) և ունի բոլոր լաւ կտորների յատկութիւնը—միանգամայն ամուր է, գործնական և շքեղ։ Գոյները՝ սև, մուգ-կապոյտ, շագանակագոյն, ձիթագոյն։ Ճանապարհածախքը 55 կ.։ Նոյնպէս ուղարկում եմ պատրաստի, կարված, միանգամայն գործնական և գեղեցիկ ՊԻՋԱԿ 2 րուբլով տարվայ ամեն եղանակին մաշելու։ Ճանապ. 55 կ.։ 2 րուբլով ՇԱԼՎԱՐ ուղարկում եմ պատրաստ, ամուր և գործնական կտորից կարված։ Ճանապարհածախքը 35 կ.։ Երեք և աւելի կտոր բերել տալուց՝ ճանապարհածախքը իմ հաշւին։ Պահանջները հասցէագրել. г. Лодзь, № 70, фабрика ЗИГМУНТА РОЗЕНТАЛЯ.
Թղթակցութիւնները ռուսերէն։
(ա. օ.) (В. 50155) 870. 17—15

2 ԶԳԵՍՏ 5 Ր. 25 Կ.
Տարածելու նպատակով՝ մենք ուղարկում ենք 12 ր. փոխարէն 5 ր. 25 կոպէկով հետևեալ զգեստացու 2 կտորները. 1) 4$^{1}/_{4}$ արշ. ֆրանս. տրիկօ տղամ. զգեստի համար, շատ ամուր, գործնական և մօդային նկարներով բրդէ կտոր։ 2) 8 արշ. կտոր «Անգլէյ», կանանց ամբողջ զգեստի համար, միանգամայն մօդային և գեղեցիկ բրդէ կտոր։ Այդպիսի 2 կտոր լաւ տեսակից՝ ուղարկում ենք 5 ր. 75 կ.-ով։ Ճանապարհածախքը 55 կ.։ Երկու և աւելի զոյգ կտոր բերել տալուց ճանապարհածախքը մեր հաշւին։ Ուղարկում ենք պօստով, վերադիր վճ., առանց կանխավճ. և երաշխաւոր., եթէ չը հաւանվի՝ յետ ենք վերցնում։ Պահանջները հասցէագրել. г. Лодзь, № 70, въ фабрику ЗИГМУНТА РОЗЕНТАЛЯ.
Թղթակցութիւնները ռուսերէն։
(ա. օ.) (В. 50257) 871. 17—15

Լոյս տեսաւ Գր. ՎԱՆՑԵԱՆԻ
ՀԱՅ ՀԵՂԻՆԱԿՆԵՐ
դասագիրքը Դ. տպագրութեամբ։ ԳԻՆԸ ՄԷԿ ՌՈՒԲԼԻ
Դիմել Թիֆլիսի գրավաճառներին և հրատարակչուհի տիկ. Վանցեանին՝ Тифлисъ, Абасъ-Абадская пл. № 5.
(ու. կ. հ.) 959. 3—1

ԻՄ Արօնի դասագրքեր ցանկացողները կարող են դիմել բոլոր հայ գրավաճառներին և ինձ (Бебутовская ул. 20)։ Զեղչը ինչպէս յայտարարված է գրքերի կազմի վրա։
ՍԱՀԱԿ ա.-քահ. ՍԱՀԱԿԵԱՆՑ
(ե. ու.) 903. 10—4

2 ԶԳԵՍՏԱՑՈՒ 4 ՌՈՒԲԼՈՎ
Տղամարդկանց հագուստեղէնի շրջանում նորութիւն է «Չէվիօտ Տուրինը»։ Այնպիսի էժան գնով՝ ինչպէս 2 ռուբ., 4$^{1}/_{4}$ արշ. կտորը, տղամ. ամբողջ զգեստացու, ոչնչով չէ տարբերվում արշ. 2—3 ռուբ. արժեցող կտորից և ունի վերջինիս բոլոր յատկութիւնները, այն է՝ բարձր տես. ամրութիւն, գործնականութիւն և էլեգանտութիւն։ Գոյները՝ սև, մուգ-կապոյտ, շագանակագոյն, ձիթագոյն։ Այդպիսի 2 կտորը ուղարկվում է 4 ռուբլով, ճանապարհածախք՝ 70 կ., պօստով, վերադիր վճ., առանց կանխավճ.։ Չորս և աւելի կտոր բերել տալուց՝ ճանապարհածախքը ֆաբրիկայի հաշւին։ Առանց ռիսկի, լրիւ երաշխաւոր., եթէ չը հաւանվի՝ յետ ենք վերցնում։ Պահանջները հասցէագրել. въ фабрику шерстяныхъ издѣлій Т-ВА «ЭХО», г. Лодзь. № 70.
Թղթակցութիւնները ռուսերէն։
(ա. օ.) (В. 50359) 872. 17—15

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ
„ԱՐՕՐ"
Ամսագրի № 6—7 (յունիս-յուլիս) միացեալ համարը հետևեալ բովանդակութեամբ.
1) Կառա-օղլու (վէպ հայ ասպ. կեանքէն) Զ. Բ. Բըջինի, Թարգմ. Մինաս Ցոլակ
2) Քեթի խանըմ (վէպ Պարսկա-Քիւրդստանի հայերի կեանքից) Խուրշիդ
3) Տանջվածը (յեղափոխական կեանքից) Շահրիար
4) Հանոյուկը (առակ) Նամալեան
5) Կոչ (բանաստեղծութիւն), Ս. Ֆրուգի Թարգմ. Կոստ. Կրասիլնիկեան
6) Հայ եկեղեց. պետակ. յարաբերութիւնները Հին-Հայաստանում Խ. Սամուէլեան
7) Կասկածը (Պալեստինի լեգենդա), Վ. Դորոշևիչի Թարգմ. Կոստ. Կրասիլնիկեան
8) Օսմ. հայերի ազգ. սահմանադրութիւնը Սարուխան
9) Իմ յուշատետրը, Լէօնիդ Անդրէևի Թարգմ. Խ. Փորքշեան
10) Հանրամատչելի զրոյցներ, Հ. Հէլմհօլցի Թարգմ. Յ. Զախմախչեան
11) Պրիստաւը Սալ Ման
12) Նա ազատ է, Ալէքսէյ Սպասսկիի Թարգմ. Լ. Դանիէլեան
13) Նկարչի յիշողութիւններից, Կազմիր Տէտմայէրից Թարգմ. Վիկտոր Մանուէլեան
14) Рах. Խաղաղասիրական շարժումն երկրագնդի վրա Հ. Առաքելեան
15) Ֆուադ փաշայի քաղաքական կտակը
16) Հայկական կեանք Ա. Ք.
17) Ռուսական կեանք Կայխաս
18) Արտասահմանեան կեանք Ա. Ն.
19) Գիտական, գրական եւ քաղաքական քրոնիկոն
20) Յաւելուած. Իննսուն երեք, մեծ վէպ Վ. Հիւգոյի, Թարգմ. Հ. Սաֆարեան
21) Յայտարարութիւններ
929. 0—1

ՀԱՇՒԱՊԱՀԱԿԱՆ ԵՒ ԳՐԱՍԵՆԵԿԱՅԻՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԴԱՍԸՆԹԱՑՔՆԵՐ
ԹԻՖԼԻՍԻ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԴՊՐՈՑԻՆ ԿԻՑ
Երկու սեռերի անձերի համար
(Տասնեւմէկերորդ տարի)
Դասընթացքներում աւանդվում են՝ կրկնակի իտալական հաշւապահութիւն արդիւնաբերութեան բոլոր ճիւղերի վերաբերեալ, առևտրական թւաբանութիւն, առևտրական թղթակցութիւն, առևտրական իրաւունք, գեղագրութիւն և ցանկացողներին՝ ըէմինգտոնով գրելու ուսուցումն։
Պարապմունքների սկիզբը սեպտեմբերի 15-ից 1910 թ.։
Դասընթացքները շարունակվում են 6 ամսից ոչ պակաս։ Պարապմունքներն երեկոները՝ շաբաթական 3 անգամ։ Ամբողջ դասընթացքի վճարն է 40 րուբլի։ Խնդիրները՝ Թիֆլիսի Առևտրական Դպրոցի Վերատեսչի անունով՝ ընդունվում են Առևտրական Դպրոցի գրասենեակում, առաւօտեան ժամը 10-ից մինչև 1-ը ցեր.։
(ու. կ. ե.) 960. 6—1

Լոյս են տեսել և վաճառվում են
Յ. ՏԷՐ-ՄԻՐԱՔԵԱՆԻ
Դասագրքերը՝
1) Իրաշրջանների վերածված թւաբանական խնդիրների ժողովածու. Ա. և Բ. տարիների դասընթաց։ 1910 թ. 30 կոպ.
2) Հարտման-Ռուզամի Իրաշրջանների վերածված թւաբանական խնդիրների ժողովածու։ Գ. տարվայ դասընթաց։ Բ. տպ. 1910 թ. 30 կոպ.
3) Նոյն գրքի՝ Դ. տարվայ դասընթաց։ 1909 թ. 35 կոպ.
Պահեստը «Գիր» գրավաճառանոցում (Тифлисъ, Вельяминовская ул. № 7).
(ե. ու.) 916. 6—3

ՀԱՇՒԱՊԱՀԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐ
Թիֆլիս, Նաբէրեժնայա, Վերայի կամուրջի մօտ, № 19.
Ի. ՖՕՆ-ԲՐԵՆՆԵՐԻ
Հեղինակ դասագրքի՝ ընդունված լուս. մինիստր. գիտական կօմիտէտի եւ ֆինանս. մինիստր. ուսումն. բաժ. կողմից իբրեւ ձեռնարկ եւ դասագիրք բոլոր առեւտր. դպրոցներում։
Դասարանները հիմնված են 1890 թ. և ուսումն. իշխան. կողմից ճանաչված են օրինակելի։ Դասարաններն ընձեռում են երկու սեռի անձերին, որոնք ցանկանում են ունենալ հաշւապահի, թղթակցի, գործակալի և այլ պաշտօն, յատկապէս առևտր. գիտութիւններ։
Դասարաններում աւանդվում են հետևեալ առարկաները. 1) ՀԱՇՒԱՊԱՀՈՒԹԻՒՆ (կրկնակի, իտալական) եւ այլ տեսակի՝ բանկային, ֆաբրիկային, քաղ. եւ զեմստ. ինքնավար., գինու մենավաճառի, գործարանային, գիւղատնտեսական և այլն։ Դասաւանդութիւնը կատարվում է միանգամայն գործնական մէթոդով և սովորողը առաջին դասից եւեթ ընտելանում է ինքնուրոյնաբար վարել գրքերը։ 2) ԱՌԵՒՏՐ. ԹՒԱԲԱՆՈՒԹԻՒՆ.—Բանկային, ապրանքային, մուրհակային եւ այլ խնդիրների լուծումներ։ 3) ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ.—Ինքնուրոյն կազմումն առեւտր. նամակների՝ հանդերձ հաշւապահ., առեւտրա-թւաբանական եւ փաստ. գիտութեամբ։ 4) ԳԵՂԱԳՐՈՒԹԻՒՆ.—Վատ ձեռագրի ուղղումն և բազմաբնոյթ տառերի ուսուցումն։ 5) ՕՐԷՆՍԳԻՏՈՒԹԻՒՆ.—Ծանօթացումն մուրհակային, գէրբովային, արդիւնատերական, կրէդիտային եւ այլ կանոնների։ 6) ԳՐԱԳՐՈՒԹԻՒՆ ՌԷՄԻՆԳՏՕՆՈՎ.—Սովորողների տրամադրութեան տակ է դրվում զանազան սիստեմների 10 հատ մեքենայ, պարապմունքներից ազատ ժամանակը թէ իրանց գրաւոր պարապմունքները կատարելու եւ թէ միաժամանակ հմուտ ղեկավարի հսկողութեամբ ծանօթանալու մեքենաների տեխնիկայի եւ մեխանիզմի հետ։ 7) ԱՊՐԱՆՔԱԳԻՏՈՒԹԻՒՆ.—Սովորողները ծանօթանում են տեղ. հրապարակի վրա գտնվող յայտնի տեսակի ապրանքների քիմիական կազմուածքի և նրանց յատկութիւնը որոշելու հետ։ Այդ նպատակի համար կայ կաբինէտ՝ անհրաժեշտ պրիբօրներով։ 8) ԹՒԱԲԱՆՈՒԹԻՒՆ ՀԱՄՐԻՉԻ ՎՐԱ.—Գործողութիւններ համրիչով։ Թւաբան. եւ հանրահաշւական խնդիրներ։ Կրճատ եւ ամբողջ. ձևեր։ Բոլոր թւաբան. գործող. եւ խնդիրները ամբողջ դասընթացքի ժամանակ լուծվում են համրիչով։
Սովորողների ընդհանուր եւ մասնագիտ. զարգացման համար կայ ԳՐԱԴԱՐԱՆ դասաւանդվող առարկ. վերաբերեալ ամենալաւ դասագրքերով (մօտ 1000 գիրք)։ Գրքերը կարելի է եւ տուն տանել։ Դասարանների դասընթացքն աւարտողները ձրիաբար կարող են օգտվել՝ գործնական հմտութիւն ձեռք բերելու համար՝ Ի. Ֆօն-Բրէններների առեւտրա-սպրաւոչնաե. տեղեկ. բիւրօյի գրասենեակում (Սերգիեվսկայա փ., № 4), որ, անպայման, օգտակար կը լինի գործնական տեսակէտից։
Դասարաններն ունեն 3 բաժանմունք. I բաժ. ընդունվում են գրագէտ անձեր, II-ում՝ քաղաքային կամ 3-դասեան դպրոցաւարտներ, իսկ III-ում՝ գործնական—հաշւապահ. և առևտր. թւաբան. գիտցողներ։ Իւրաքանչիւր բաժ. դասընթացքը տեւում է 5 ամիս։ Պարապմունքների սկիզբը ՍԵՊՏԵՄԲ. 15-ից։ Խնդիրները եւ տեղեկ. ընդունվում են դասարանների գրասենեակում՝ Թիֆլիս, Նաբերեժնայա, Վերայի կամուրջի մօտ, սեփ. տ., № 19 կամ Սերգիեվսկայա փող, № 4. Գրասենեակը բաց է ամեն օր՝ առ. ժ. 9—1-ը եւ երեկ. ժ. 5—8-ը։ Տելէֆօններ—929 եւ 1044. (օ. մ.) 939. 20—3

ԱՌԵՒՏՐԻ ԵՒ ԱՐԴԻՒՆԱԲ. ՄԻՆԻՍՏՐ. ՏՆՕՐԻՆՈՒԹԵԱՆ ՆԵՐՔՈՅ ԳՏՆՎՈՂ
Տ. Մ. ՓԻԼՕՅԵԱՆԻ
ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԿՈՒՐՍԵՐՈՒՄ
Թիֆլիս, Միխայլեան պր. 24/4.
Տալիս են երկսեռ անձերին մասնագիտական առևտր. կրթութիւն։
Դասընթացքն աւարտողներին տրվում են ատտեստատներ։
ԳՈՐԾՆԱԿԱՆ պարապմունքները կատարվում են կուրսերում՝ Pitman և Պարիզի Pigier դպրոցների ձևով կազմակերպված Muster-Comtori-ում։ Նիւթերն առնվում են իրական կեանքից։ Առարկաներն են. ա) ՊԱՐՏԱԴԻՐ.—1) Հաշւապահութիւն (պարզ, իտալ., գերմ., ֆրան., ամերիկական, բանկային և գործարանական), 2) Առևտրական թւաբանութիւն, 3) Քաղաքատնտեսութիւն, 4) Օրէնսգիտութիւն (առևտրական իրաւունք, մուրհակի կանոնադրութիւն), 5) Առևտրական թղթակցութիւն, 6) Թւաբանութիւն համրիչի վրա, 7) Վայելչագրութիւն, արագագրութիւն (ամենավատ ձեռքի ուղղումն). բ) ՈՉ-ՊԱՐՏԱԴԻՐ.—1) ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐ, 2) սղագրութիւն, 3) դակտիլօգրաֆիա (ռեմինգտոն և այլ.) և 4) առևտրական թղթակցութիւն օտար լեզուներով։ Պարապմունքները կատարվում են և կատ-կատ։ Ունկնդիրների թւի շատութեան պատճառով բացվում է զուգընթաց բաժանմունք։ Ունկնդիրների թիւը սահմանափակված է։ Պարապմունքների սկիզբը սեպտեմբերի 15-ին։ Խնդիրների ընդունելութիւնը սեպտեմբերի 1-ից, առ. 10—2 ժ. և երեկ. 4—7 ժ.։ Ծրագիրը և կանոններն ուղարկվում և տրվում են ձրիաբար կուրսերի շէնքում։
Կուրսերի հիմնադիր՝ առևտր. գիտութեան կանդիդատ՝ Տ. ՓԻԼՕՅԵԱՆ
907. 0—7
(ու. կ. չ.)

Типографія „Экономія" Большая Ванкская № 3.